



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2728

2729

2730

2731

2732

302

303

85

A-12

ԱՔՆԻ ԱՄԱՆՏՅՈՒ

ԱՔՆԻ ԱՄԱՆՏՅՈՒ

Կամ

ՍԵՆՆԿՍԻ ԱՌԱՆՅՆԱԿԵԱՅԸ

ԹԱԿՍԱՆԵՑ

ՓԲԱՆՍԵՐԵՆԷ

Յ. Գ. ՍԸՎԵՂԵՆՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԿՈՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ռ. Յ. ԳԻՐԳՃԵԱՆ Ե ԿԻՆՃԱՆՃԼԱՐ

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

1911

PLANTING
AND
CULTIVATION



UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

HEAR HURUSOP

LEHWA

சென்னை நகராட்சி

பொது உதவி

84
ՍԷՆՔ ԱՄԱՆՏՅԻ ԼԵԲՍԻԼ

կամ

ՍԵՆԵԿԱՄԻ ԱՌԱՆՅՆԱԿԵԱՑԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՓՐԱՆՍԵՐԻՆԻ

Յ . Գ . ՍԸՂԸՆԵՆՆ

Հրատանաւ

ՀԱՍԱՐԱԿԱՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԷԻ

Կ . ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ . Յ . ԲԻԻՐԳՃԵԱՆ

— 1859 —

835

1901

RECEIVED

RECEIVED

RECEIVED

RECEIVED

1901

RECEIVED

7791-54

RECEIVED

1901

ՍԷՆԹ՝ ԼՄՆՆՏՑԻ ԼԻՒՍԻԼ

4ամ

ՍԵՆԵԿԱԻ ԱՌԱՆՑՆԱԿԵԱՅԸ

ՅԵՌԵՂԵՐԵՆ

Օր մը, Սենեկալի մէջ Ռիշար—թօլ Լսւած գեղեցիկ դաշտին մէջ կը պտըտէի, մարգագետնի մը վրայ ծառերուն անբերուն տակ կէս պահվըտած մարդ մը տեսայ գետինը նըստած : Օգնի անապատին վրանաբնակներէն մէկը կարծեւով, արաբերէն բարև մը տուի, բայց անծանօթը ինծի ֆուստերէն պատասխանեց :

Ինծի համար չնաշխարհիկ և երանելի բան մ'էր այսչափ հեռաւոր երկրի մը մէջ հայրենակիցի մը պատահելը . ուստի անզիմազրելի զօրութեամբ դէպ 'ի այս անձին քաջվեցայ . նման այն զօրութեանը, որ կը հրէ սիրահարն իր սիրուհուն և ծարւած բերանը աղբիւրին :

Եսի բարձրահասակ մարդ մ'էր . իր դէմքը , թէպէտ աւրըված , սակայն աղնուակա նութեամբ լեցուն ըլլալը կը յայտնէր , և երկայն մօրուք մ'ալ ունէր նէ ալ , կերևար որ դեռ երիտասարդ էր :

— Բուք Եւրոպացի՞ էք , հարցուցի իրեն :

— Ե.յո՛ւ պարօն , ֆուանսացի եմ , և երջանիկ՝ ձեր ուշադրութեանն արժանի ըլլալու համար . վատն զի կարի շատ ատեն է , որ հայրենակից տեսած չունէի . և եթէ չը վախնայի ձեր պտոյտքը ընդմիջելու , պիտի համարձակէի ալ զձեզ աղաչելու որ հաճիք մինչև իմ բնակարանս գալու , որ շատ հեռու չէ : Բուք ինձի կը խօսէիք մեր սիրելի հայրենեաց վրայ :

— Մեծ հաճութեամբ , պատասխանեցի :

Ե.յն ատեն անձանօթը առջևէս ընկաւ ու շուտ մը հասանք իր եղեգնեայ խրճիթը , խումբ մը արմաւենիներու ստուերին ներքև շինված : Սեամորթ մը և գեղեցիկ շուն մը այն տեղին պահպանութիւն կրնէին :

— Եհա բոլոր իմ ընկերներս , ըսաւ անձանօթը տխուր դէմքով մը :

Ետքը ինձի ցուցուց իր տնակին ներսի դին , ինձի տեսնել տուաւ իր պարտէզը , իր ծաղկունքը , վերջապէս ինչ բաներով որ ինքը կզբա-

դէր . ու խրճիթին առջև փսիադի մը վրայ ծըս տեղով , Ֆուանսայի վրայ խօսիլ սկսանք : Իրիկ ուան դէմ մասնակից եղայ իր մրգեղէն ընթրեացը և արևը մայրը մոնեկէն շատ ետքը զատ վեցայ իրմէն :

Եւջի տեսութենէն , սաստիկ համակրութիւն մ'ըգացի այս անձին վրայ . ուստի շատ անգամ դացի զանի տեսնելու . և աւելի կը հարէի անոր , մանաւանդ քանի որ կզգայի թէ մեծ դըժբաղդութեան մը զոհ եղած ըլլալու էր . վասն զի անսովոր տխրութիւն մը կար վրան միշտ : Եւ ասկէ զատ չէնէ ինչու համար հոն այն առանձնութեան մէջ պիտի ապրէր : Շատ կուղէի իր զաղտնեացը գիտակ ըլլալ , բայց փափուկ խոհեմութեան մ'արգիլելովը չէի համարձակեր բառնալու այն քօղը , որուն ներքև կարծես թէ ծածկել կուզէր իր անցեալը : Սակայն , ճամբայ ելնելէս քանի մ'օր առաջ , իմ հետաքրքրութեանս անսալով , իրեն հարցուցի թէ 'ի Բարիզ գառնալու միտք չունե՞ր մի :

— Ե՛հ . Բարիզ . . . այս աշխարհի էն գեղեցիկ բնակարանն է , պատասխանեց ինձի , անտարակոյս Բարիզի մէջ ապրել կը սիրէի , եթէ երջանիկ ըլլալու կարենայի , բայց հիմայ , ա՛լ ինձի ուրիշ բան պէտք չէ , եթէ ոչ անսպասն

ու մահը :

— Աւրեմն քու Թշուառութիւններդ շատ մեծ են . ա՛հ , եթէ ձեզի պէտք կըլլայ իմ արտասուքս ձեր սիրտը մխիթարելու համար , եթէ իմ սիրտս կրնայ ձեր ցաւոյ կէսը պարունակելու , Թափեցէք , կաղաչեմ , Թափեցէք ձեր Խորամուծեանց դառնութիւնը իմ ներսի դիս . ես դեռ շատ երիտասարդ եմ ձեզի խրատ տալու համար , բայց ձեր վշտացն այնչափ կարեկից կըլլամ , որով կարելի է քիչ մ'սփոփանք գրանէք :

— Արիտասարդ , պուայ անձանթը վեհ եղանակով մը . այո՛ , իմ Թշուառութիւնքս մեծ են , բայց ես վշտակցութեան ամենեւին արժանի չեմ : Խստաբարոյ մարդիկ զիս վատ կոչելու են . բարեսիրտ մարդիկ ալ են շատը քիչ մը գթալ կրնան վրաս : Կը հաճիմ ձեզի հաղորդել իմ պատմութիւնս . վասն զի կը յուսամ որ անիքեզի համար մը կըլլայ կարելի է քեզի արգելելու այնպիսի մեղքեր գործելէ , որոնց սոսկալի հետեանքը ես հոս քաւեմ :

Վայրկեան մը միտքը ժողվելէն ետե , անձանթը հետեեալը պատմեց ինծի , որ ամենամեծ մտադրութեամբ մտիկ ըրի մինչև վերջը :

Ա

Դուք գիտե՞ք, ըսաւ ինձի, ինչպէս կեանք կանցընեն մեր այս օրուան մեծ իշխաններուն որդիքը... իրենց երիտասարդութիւնը կը մաշեցընեն ժողովուրդին աղջկանց հետ ցոխութիւնընելով. և եւսունին ու քաւսունին մէջն է, որ իրենց ամուսինն ընելու համար, կնոջ մը ճըշմարիտ ընտրութեանը կեղնեն: Ահա, քսան տարու եղած ատենս այսպէս էին իմ վարմունքս ու նպատակս:

Իմ ընտանիքս դէմ չը կենալէն զատ, այս զուարճայի կենաց մէջ աւելի կը մղէր զիս իմ հայրս, նախնի նաւապետ Պեօւրոնի կոմսը, որ զիս ալ ծովային անձ մ'ընել ուզելով կը խորհէր, որ ես երբէք ընտիր նաւորդ մը չէի կրնար ըլլալ, եթէ նաւ մտնելէս առաջ, ամեն զգացմունք կորուսած չըլլայի:

Հողիւ տաս վեց տարու կացի, որ արդէն կսկսէր ինձի հրապուրանաց ճամբաները կամաց կամաց սովբեցընել: Ինձի բարեբաղդ պատահմութիւնը կը հայթայթէր, զիս դժուար արկածներու մէջ նետելով. և իր զուարճութիւնն էր իմ սիրահարութեանց կապերը շուտ մը կտրել տալ, զիս յանկարծական անջատում:

ներու ընտելացընելու համար . « կը տեսնե՞ս
 ,, տղաս , կըսէր ինձի շատ անգամ . ընտիր և
 ,, մանաւանդ երջանիկ ծովական մ'ըլլալու ա-
 ,, ռաջին պայմանը ազտոտ սիրոտ մ'ունենալն է .
 ,, դուն պիտի արօրադրես ծովերը) մէյ մը երկ-
 ,, րագունտիս մէկ ծայրը պիտի ըլլաս , մէյ մը
 ,, միւս ծայրը : Քեզի ցաւերու ու անհանգըս-
 ,, տութեանց աղբիւր մը չը՞ պիտի ըլլայ սիրել
 ,, մէկ կին մը , որուն քովէն դուն շարունակ
 ,, հեռու պիտի գտնըվիս . որ քեզ պիտի խա-
 ,, բէ , և թերևս քու պատիւդ ալ ստակի մը
 ,, պիտի ընէ քու բացակայութեանդ ատեն . ե-
 ,, թէ դուն սիրելու կարօտութիւն բաշես , տա-
 ,, րածէ քու սէրդ ամբողջ բնութեան վրայ .
 ,, հետևէ խրատուցս , որդեակ իմ , հասարա-
 ,, կութեան մտքէն բարձր ըրէ դուն ինքզինքդ ,
 ,, իշխէ բոլոր այն կիրքերուն վրայ , որ սովո-
 ,, րական մարդոց վրան կիշխեն , և զանոնք ցա-
 ,, ւերու ու ոչնչութեան կառաջնորդեն » :

Իմ հօրս այս փիլիսոփայութիւնը շատ հո-
 յակապ , խելացի և մանաւանդ հաճելի կերե-
 ւար ինձի . ուստի դիւրութեամբ ընդունեցի ա-
 նոր կանոնները :

Երդ՝ քանի մը տարի 'ի Բարիզանցընէլէն
 ետև , ուր բազմութիւ արկածներ ունեցած էի ,

Պեօւրոնն զղեակը դարձած էի , իմ տուփական
 գործողութիւններէս ետ'ն , քիչ մը հանգչելու
 համար : Եթէ Վ.յէւմօնի մէջ Պուռժի ճամ-
 բէն անցած էք նէ՛ անշուշտ տեսած ըլլալու
 էք այս հարուստ ամրոցին սպիտակ և ժայռա-
 ւոր փոքրիկ աշտարակները . իբր դիրքը շատ
 գեղատեսիլ է . Սէնդ—Մմանտի գեղեցիկ գիւ-
 ղաքաղաքէն մէկ երկու ժամու ճամբայ հեռու ,
 բարեբեր լեռան մը կողմն վրայ հաստատուած ,
 շքեղ պարտէզներով շրջապատուած է : Ետեւի
 կողմը կան որսալից մեծ անտառներ . այն բը-
 լուրին վարի դին ալ տնկըված են ցած նշդա-
 րիք (կիւլիէն աղաճը) . անկէ անդին ալ ան-
 հուն մարգագետինն մը կը տարածվի , որուն
 մէջէն կանցնի Վէու գետը :

Արասկի օր մը , իրիկուան կերակուրէն ե-
 տե , այս նշդարիներուն ներքե , ծառի մը տակ
 նստած՝ լուռթեամբ կը գզուէի իմ տիրասէր
 Բիւրամս , զոր ահա կը տեսնէք , երբ յանկարծ
 չոր տերևներու շրջինն մը լսեցի . շունս կը
 շտկըվի , աչքերս կը դարձունեմ ու կը տես-
 նեմ ինէ քանի մը քայլ հեռուն մանկամարդ
 աղջիկ մը , որ ծաղիկ կը ժողվէր :

Ես երկու ծառի մէջ տեղ նստած էի ,
 այն կերպով որ կրնայի կատարելապէս զիտել

այս անձանիօթը , աւանց ինքը զիս տեսնել
կրնալու : Աւշադրութեամբ զխտեցի զինքը , ու
անձառելի յուզմունք մ'զգայի ներսի զիս :
Ենչափ գեղեցկութիւն և այնչափ շնորհք մէկ
տեղ տակաւին տեսած չունէի՝ ամենեւին : Գիւ-
րաշարժ ու բարձր էր հասակը , խարտեաշ-
մազեր մետաքսաթել խոպոպիքով կը ձօձային
վարդագոյն և թաւշակերպ մարմնոյն վրայ : Իր
դէմքը հրեշտակային . իր փոքրիկ ոտքերը հա-
զիւ կը ձնչէին իր կոխած մամուռը : Բայց իմ
զարմանքս ան ատեն աւելի շատ եղաւ , երբ
շատ մը մանուշակներու քով գալով ինձի աւե-
լի մօտեցաւ . անտարակոյս , այնչափ շատ ծա-
ղիկ գտներուն վրայ երջանկացած՝ ակործելի
խնդայք մ'ընելովը , բացվեցան ծիրանեգոյն
ջրթունքներ , որոնց մէջէն փայլուն սպիտակու-
թեամբ ակռայներ երևցան :

Վերջապէս , այսպէս իմ մօտս կեցած վայր-
կենին մէջ , հազարաւոր բարերար զգացողու-
թեանց հրապոյրքին ներքև էի . ուրիշ բան
չէի տեսներ , եթէ ոչ նա . ուրիշ բան չէի լը-
սեր , եթէ ոչ անկէ եկած ջրջիւնը :

Հազիւ կը համարձակէի շունչ առնել
տալու , զանի սոսկացրնելու և փախցրնելու
երկիւղով . Բիւրամն իսկ , կարծես թէ իմ խոր-

հուրդս հասկընալով, համր ու անշարժ կը կե-
նար : Բայց շուտ մը լսեցի շատ մը աղջկանց
ձայներ, որ մարդին խորէն կը կանչէին .
Վիւսի՛ւ, Վիւսի՛ւ, աս է եղեր իմ գեղեցիկ
անժանօթիս անունը : Իր քաղցր ու հնչող
ձայնը հանեց իր ընկերներուն պատասխանելու
համար ու աներևութացաւ :

Մտայս յափշտակութենէն արթննալով, բը-
նական ազդմամբ մը վաղեցի ձի հեծայ, և աղ-
ջիկները որ ճամբան բռներ գացեր էին նէ՛
դէպ 'ի այն կողմ դիմեցի :

Սէնդ—Եմանտ մտնելու տեղը հասայ անոնց,
ու շատ զարմացայ երբ բուն իմ հալածածս չը
տեսայ : Երբ իր երկչոտ ընկերներուն հար-
ցուփորձ ընել ուզեցի՝ ամենքն ալ փախան ու
մէկ մէկ կողմ աներևոյթ եղան, առանց և բառ
մ'ալ պատասխանելու : Եւտ կը ցաւէի այն
մանկամարդ օրիորդին բնակարանը անմիջա-
պէս չը գտնալուս համար. սակայն քաղաքը
շատ պզտիկ ըլլալով, կը յուսայի շուտ մը
զանի գտնելու կարող ըլլալ :

Նոյն իրիկունն իսկ փողոցները պտըտեցայ
աչքերս տնկելով դերձակուհիներուն ու կտա-
ւաւաճառ կիներուն խանութներէն ներս :
Պտըտելու տեղերը գացի, կաքաւներուն մէջ

մտայ , իմ բարեկամներուս հարցուփորձ ըրի ,
ամենքն ալ անօգուտ եղաւ . այն աղջկան վը-
րայօք լուր մը կամ տեղեկութիւն մը չը կրցայ
առնել : Էտեւեալ օրը , նոյն եռանդով նո-
րէն սկսայ իմ խնդրանքս ընելու , բայց առանց
աւելի յաջողութեան . վերջապէս , ութ օր ,
իմ պտըտեւներս ու հարցուփորձս անպտուղ
մնացին :

Մ. Լ կսկսէի հաւտալու թէ իմ գեղեցիկ անծա-
նօթս էակ մը չէր . և ես Պեօւրօնի պրակնե-
րուն մէջ ցնորքի մը խաղալիկն եղած էի՝ երբ
իրիկուն մը Սէնդ—Մամնտի մէջ իմ պանդո-
կիս վարիյարկը սուսերամարտութեան դաս ա-
ռած ատենս , սրահին դռանն ետեէն մտնունջ
մը լսեցի . դուրս ցատկեցի , ու շատ մը աղ-
ջիկներու խումբի մը մէջ տեղը գտնըվեցայ ,
որոնք հետաքրքրութեամբ եկած են եղեր կող-
մանքին ծակէն իմ դաս առնելու տեսնելու . իմ
յանկարծ երևնալս անոնք ահուդողի բերաւ .
ձեռքերս երկնցուցի մութին մէջ զանոնք բըւ-
նելու , մէկ հատը մնաց ձեռքս , միւսները փա-
խան նեղ ու մութ անցքերուն մէջէն մեծ ձայ-
ներով պօռալով . իմ գերուհիս պարապ տեղը
յուզեցաւ (չապալանմագ) ձեռքէս փախչելու
համար . զիւրութեամբ ձեռքս անցուցի ու իմ

Ճրագիս առջևը բերի զանի, աւելի տղէկ անս-
 նելու համար իր տագնապը . վասն զի միտք
 չունէի զանի չարչարելու . բայց լուսուն առա-
 ջին ճառագայթներն հազիւ անոր դէմքը որո-
 շել տուին ինծի, որ ճանչեցի շուտ մը Պետ-
 րօնի անտառակներուն մէջ ինծի երեցող ըս-
 քանչեւագեղ արարածն ըլլալը, զոր այնչափ
 կը փափաքէի նորէն տեսնել: Առջի բերանք
 չը կրցայ հաւատալ այս հրաշալի դիպուածին,
 որ զանի այսպէս ինծի կը բերէր կախարդու-
 թեամբ մը գողցես, և վայրկեան մը մտածեցի
 թէ ցնորք մը չըլլայ: Մակայն ճշմարիտ ըլլալը
 յայտնի էր . այս գողգողացող աղջիկը իմ բազ-
 կացս մէջ բռնած էի . իր մետաքսաթէլ ար-
 ճակ խարտեաշ մագերը կը ծածանէին իմ ու-
 սիս վրայ: Մոլեգնութեամբ կը դիտէի զանի
 և մէկ դաշոյնով մը պիտի սատկըցընէի ով որ
 զանի ինչ զատել ուզէր . բայց իր գեղեցիկ կա-
 պուտ աչքերը ինծի նայեցան այնչափ ազու տը-
 պաւորութեամբ մը, որ ալ զանի բռնելու զօ-
 րութիւնս չմնաց . կամացուկ մը ինքզինքը խը-
 լեց իմ սեղմած բազկացս մէջէն, ու աներևու-
 թացաւ:

— Դա աղջկանն ետեէն գնա ու եկուր, ը-
 սէ ինծի թէ ուր կը բնակի, ըսի իմ սուսերս:

մարտութեան վարպետիս :

Տաս վայրկենէն ետեւ , զինուց վարպետը բու-
լոր իմ փափաքած տեղեկութիւններս բերուաւ :
Ներխուսասարդ աղջկանն անունը Վիւսիլ Վյոմն
էր , իր մայրը մեռած ըլլալով , մինակ կապրէր
իւր հօրը հետ , որ ատաղցագործ (տօղրամաճի)
վարպետ մ'էր . իր քահանայ հօրեղբայրը իրեն
տուած էր շատ զեղեցիկ դաստիարակութիւն
մը . և ասի նշանած էին երխտասարդ գործա-
ւորի մը :

Եւ ինծի ուրիշ բան չէր մնար , թէ ոչ հը-
նարք մը այս ընտանեաց մէջ մտնելու և դոհա-
ցընելու այն կիրքը , զոր այս ծաղկահասակ օրի-
որդը ներշնչած էր ինծի : Եսոր վրայ մտածե-
ցի ու երագեցի զիշերն 'ի բուն . բայց հետեւ-
եալ օրը կէս օրին ատենը հաղիւ կըրցայ որոշիլ
իմ յատակագիծս , ու ելայ ատաղցագործին խա-
նութքը դացի :

Կը հասնիմ հոն , ու զխումամբ գործարանին
դռնէն ներս մտնելու տեղ , տանը դռնէն ներս
կը մտնեմ : Վիւսիլ մինակ է , իս տեսնելով
կայսոյլ . այտերը կեռասի պէս կը կարմրին ,
ու կոշտ կերպով մը կառնէ բարեւս : Եւ ջի ի-
րիկուան արկածին յիշատակը տեսնելէ կեր-
պով կը տազնապէր զինքը , անշուշտ քիչ մը .

նաց, որ ինքզինքը տակաւին իմ զինուոց որահիս մէջ բանտարկեալ կարծէր :

— Պարոն էյօճը ո՛ւր է, Օրիորդ .

— Հայրս, հոս գործարանին մէջ է, եթէ պարօնը կը հաճի ձանձրութիւն յանձն առնել մտնելու . . . Եւստիլ դուռ մը կը հրէ ու ինքը-զինքս ատաղջագործին դէմը կը գտնեմ :

— Չեզի բան մ'ապսպրելու կուգամ, պօ-ուացի :

— Պատրաստ եմ ձեզի ծառայելու, պատասխանեց գործաւորը, գլխարկը ձեռքը առնելով :

— Մենեկի մ'ամբողջ կարասիք կուղեմ. և կը փափաքիմ, որ անմիջապէս սկսիք .

— Հիմայ ձեռքս շատ գործ կայ նէ ալ, որովհետև դուք այդչափ կաճապարէք՝ կրնամ ուրիշ գործաւոր մը բռնել :

— Պէտք չէ . ընդ հակառակն ասի շատ ծանր առաջ երթալու է . վասն զի ես ինքս կուղեմ այս գործին մանրամասնաբար վերակայութիւն ընել, գծագրութիւնները ես տալ, ես ալ շատ ծոյլեմ :

— Չեզի ինչպէս հաճոյ է նէ՛ այնպէս կը-նեմ, իմ մօրաբեռորդիս Գաբրիէլը հոս է . կրնաք դուք ձեր յատակագիծներն անոր հաղոր-

45-164

դեւ . ան ինէ աղէկ կը հասկընայ ձեր միտքը .
դուք զիտէք , որ հին ատենը ամենեւին դաստի-
արակութիւն չը կար :

— Ընանկ է նէ , վաղը կսկսինք :

Խօսակցութեան ատեն ես այս երիտասարդ
գործաւորը դիտեցի , զոր ԼՅյմօն հայրը Բաբ-
րիէլ կանուանէր : Փափուկ կազմուածք մ'ու-
նէր . և իր անմօրուք ու խարտեաշ մագերով
չըջանակված դէմքը քաղցրութիւն ու երկչո-
տութիւն կը ցուցընէր : Ո՛չմարտապէս , ասի
էր Լ իւսիլի նշանածը , որուն վրայօք ինծի խօ-
սած էր զինուց վարպետը :

Նորէն տանը դռնէն դուրս ելնել կուղէի ,
դարձեալ Լ իւսիլը տեսնելու համար . բայց
ԼՅյմօն հայրը , փողոցին վրայ դուռ մը բացաւ ,
ու ալ ազատութիւն չունեցայ էն ախօրժեւի
ճամբան բռնելու :

ԼՅյ առաջին այցելութենէն շատ դո՛հ եղայ
առջի բերան : Հետեւեալօրը դիտմամբ քիչ
մ'ուշ գացի գործարանը , ու աճապարեցի ԼՅյ-
մօն հօր առջև թուղթ մը տարածելու , որուն
վրայ քանի մը ծրագիր քաշած էի :

— Կը տեսնէք որ , սլուացի , աշխատելու համար
իմ գեղեցիկ դիտաւորութիւններս մեծ արդիւնք
մը չունեցան : — Բոլոր աւտուն պարտապ անցու-

ցի . ու օրնալ լման նոյն անգործութեամբ պիտի անցնէի, եթէ ինքզինքս չը թափէի հաղար ու մէկ զբաղմունքներէն , որ սովորաբար բոլոր իմ ժամանակս կը խլեն կը յափշտակեն . — ուստի չը՞ կրնար ըլլալ արդեօք , ամեն օր հոս գամ ու իմ ծրագիրներս հոս շինեմ . . .

— Ե՛հ , շատ դիւրին բան է ատ , պարօն , իմ աղջկանս փոքրիկ գրասեղանին առջև կը նստիք ու կաշխատիք :

— Ե՛հ ա՛տ աղէկ . սա առաւելութիւնն ալ կունենամ , որ Պ. Գաբրիէլին քովը կըլլամ , որուն հետ կրնամ առանց տեղափոխութեան խորհրդակցիլ :

— Ենտարակոյս պարօն :

Եւ յի՞ծն հայրը զիս բնակարանը տարաւ . Վիւսիլ իմ նորէն երթար տեսնելով յայտնապէս ցուցուց բուռն այլայլութիւնք . բայց շնորհալի կերպով մը գրասեղանին քովը գրաւ մեկանք , գրիչներն ու թուղթը : Երբ որ տեղաւորվեցայ նստայ՝ ատաղճագործը գործարանը մտաւ , ու ես մնացի մինակ գեղեցիկ Վիւսիլին հետ :

Եւ մեն բան իմ յուսացածիս պէս ալ աղէկ առաջ կերթար կոր . ես ալ միշտ կզգուշանայի որ արկածները փութացընելով , իմ յաջողութիւններս չը կորսնցընեմ :

Մտադրութեամբ աշխատել կեղծեցի, և այս աղջիկը դիտեցի: Հայլն մը հրաշալի կերպով կօզնէր ինծի գլուխս չը դարձընելով անոր ամեն շարժմունքներն տեսնելու: Իմ ներկայութիւնս իր մտքին մէջ մեծ խռովութիւն մը կը ձգէր, իր վարմունքը ծածկելու կարող կացութիւն մը չը գտնելով, ետևի կողմն եղած խուցի մը մէջ քաշվեցաւ. հոն ալ զինքը կը տեսնէի դրանն ապակիիներէն: Հոն քանի մը վայրկեան նստած ու անշարժ կեցաւ. ետքը սկսաւ երթալ գալ ինչպէս կտաւաքաղ (քէթէն քուշու) մը վանդակին մէջ: Կ'ընկար որ սիրտը կը նեղանար, կամ մանաւանդ խօսելու, և իմ ներկայութեանս իրեն ներշնչած ամեն խորհրդածութիւններն մէկու մը, և առաւել լապէս իր բարեկամը, Գաբրիէլին հաղորդելու կարօտութիւն ունէր: Իրեն մէկ քանի խօսքընելու համար, ոտքի ելնելու վրայ էի. բայց, նոյն վայրկենին, խուցին դուռը կէս մը բացաւ, ու դուրս ելաւ. և իր փոքրիկ ոտքերուն ծայրին վրայ կոխելով, ու իմ մտադրութիւնս չարթընցընելու ամեն կարելի զգուշութիւններն ընելով, գործարանին դուռն հասաւ, ու դուռնը ապակիներուն միջևէն, իր գեղեցիկ վարդագոյն փոքրիկ ցուցամատովը նշան ըրաւ, ետքը

ետ քաշվեցաւ : Ինչպէս որ կը յուսայի , Գաբրիէլ չ'ուշացաւ գործարանէն դուրս ելնելու : Լիւսիլ նշաններով կապսպրէր անոր ոտքի ձայն չը հանելու . բայց իր նշանաժը գոհացընելու փափաքին հակառակ , խեղճ տղան չը կըրցաւ թեթե կերպով քալել իր փայտէ խոշոր կօշիկներովը : Աերջապէս նորահասակ աղջկանը մօտը հասաւ , որ փութաց անոր թեւէն բռնելու ու զանի քաշել խուցին ծայրը տանելու , ուր անշուշտ իմ վրայօքս շատ մը կատակաբանութիւններ ըրաւ խնդալնելով , որոնց ձայնն ալ երբեմն կը լսվէր :

Արբ Լիւսիլ ներսիդին ունեցածներուն ամենն ալ ըսաւ , իր նշանաժը խօսակցութիւնը զօրացընելու ոչ կարողութիւն և ոչ միտք ունենալով , լուեցին :

Ասկէ զատ Գաբրիէլ կը փափաքէր երթալ նորէն իր աշխատութիւնը ձեռք առնել . բայց երիտասարդ աղջիկը , որ սլ մինակ մընալ չէր ուզեր՝ շուտ մը զանի վար դնելու և զուարթանալու միջոց մը գտաւ : Յիսի մը կը նետէ անոր ուսերուն վրայ , իր գլխարկներէն մէկը անոր գլուխը կը դնէ . խեղճ տղան բառ մ'արտասանելու ատեն չունեցաւ՝ ահա տաս և հինգ տարու աղջիկ մ'էր դարձած : Լիւսիլ

կը խնդայ անոր կերտարանքին վրայ, և ամեն կերպով անոր դէմ կը կենայ :

— Վեղ Պ . Պեօւրօնին ցուցընելու եմ , կըսէր անոր ցած ձայնով , զանի դէպ 'ի դուռը մղելով : Երկչոտ Քաբրիէլը մեծ ստացուածք մ'ալ տային իրեն՝ չը պիտի ուղէր , որ ես զանի այսպէս փոխված տեսնէի . բայց իր այնչափ սիրած ծաղկահասակ օրիորդին քրմացը խաղալիքն ըլլալու շատ սովորած էր . ասկէ զատ կը վախնար որ ցփսին ու գլխարկը չը պատուի : Եւստ կը վարանէր . — և որչափ ինքը վախնալ կը ցուցընէր , նոյնչափ Վիւսիլ կը խնդար : Վերջապէս զանի այնչափ ուժով հըրհեց՝ որ սեղան մը , որուն կըրթընած էր Քաբրիէլ , մեծ շառահամալք ընկաւ սալայատակին վրայ :

— Ի՞նչ կընէք հոտ , անիծեալ խըպըլիքներ , պօռաց Նյւմօն հայրը գլուխը դործարանին դռնէն ներս խօթելով , մուցա՞ք որ Պ . Պեօւրօն հոս կաշխատի . . . :

— Ըսէք իրենց մանաւանդ , որ շարունակեն . և աղաչեցէք զանոնք որ իս ալ իրենց խաղըրուն մէջ ընդունելու հաճին , պօռացի՞ Նյւմօն հօրը դէմ ոտքի վրայ կենալով :

— Հապա ձեր գծագրութիւնները , պա-

րոն :

— Իմ գծագրութիւններս աւելի աղէկ և աւելի շուտ կըլլան, իմ քաջ Այսին հայրս . վասն զի աղաղակներու մէջ ապրելու սովորած լռութիւնը քիչ մը զաղափարներ ունենամ նէ՞ գանոնք ինէ կը յափշտակէ :

— Եթէ այդպէս է ...

— Յիրաւի, կըսեմ ձեզի, և ալ կաղաչեմ զձեզ որ ներէք ինծի ձեր տանը մէջ ազատ ու համարձակ ըլլալու, ինչպէս որ կը յարմարի իմ սովորութեանց ու բնութեան : — Միայն, այս օրէն հաշուելով, Գաբրիէլին աւուրչէքը ես պիտի վճարեմ . վասն զի եթէ ա՛նոր ժամանակ կորսնցնել տամ, չեմ ուզեր որ ձեր փնասովն ըլլայ :

— Ուրեմն ինչպէս կը հաճիք, նոյնպէս ըրէք, ըսաւ ինծի Այսին հայրը, գործարանը մտնելով :

Այս խօսակցութեան ատեն Գաբրիէլ մէկդի նետած էր ցփսին ու գլխարկը, և առանց աղաղակի գործարանը սպրդել մտնելու ճարը դտած էր . ուր կորուսած ժամանակը նորէն վաստըկելու կերպով կաշխատէր : Այս դէպքը բնականաբար ինծի աւելի կուտար Ալիսիլին հետ խօսելու . մինչև խուցին դրանն

առջև դացի , ուր մէկ անկիւնն մը կծկած էր՝
այտերն իբրև վայրի վարդ :

— Օրիորդ , ըսի իրեն , շատ կը ցաւիմ
ձեզ տրտմեցընող , և ձեր զբօսանքը վերջա-
ցընող հայրական թեթև յանդիմանութեան ա-
նուղղակի և ակամայ պատճառն ըլլալուս . ձեզ
չ'արգիլեիքն զատ , կը ցանկամ ընդ հակառակն
այսուհետև ձեր տղայական զբօսանաց մասնա-
կից ալ ըլլալու . ես ալ ձեզի պէս երիտասարդ
եմ , և ձեզի պէս ես ալ կը սիրեմ խաղալ
խնդալը . ուստի ալ իս խռովելու վախ մ'ու-
նենաք . ես հոս ձեր եղբօրը պէս ըլլալ կու-
զեմ . դուք զիս երկրորդ Գաբրիէլ մը պիտի
գտնէք :

— Գուք շատ բարի էք , պարօն , թոթովեց
Նիւսիլ :

— Այս կիթառն ու երգոց տետրակը , որ
հոն կը տեսնեմ , կը հաստատեն , որ դուք երա-
մթշտ էք . ուրեմն ձեզի երգեր բերեմ ու մէկ
տեղ երգենք . — զիտեմ ալ , որ դուք ծաղիկ
կը սիրէք , ձեզի ուսցընեմ ծաղկի - նկար գոր-
ծածելն ալ , որ ամեն ծաղկին անունն ու որ-
պիսութիւնն ալ ճանչէք . աս ալ ձեզի երբե-
մըն կրնայ զբօսցընել : Ասղաջեմ զձեզ , իմ
առջևս ալ ազատ ու զուարթ եղէք , ինչպէս

Գաբրիէլին առջև : Ես ձեր բնութենէն տար-
բեր բնութիւն մը չունիմ, և ձեզ բնաւ մէկ
բանով մը չեմ խուովեր : Այդը երգեր ու իմ
ճաղկի-նկարս կը բերեմ, ու կսկըսինք իրարու
հետ խօսել, իբրև երկու բարի բարեկամ .
կուզէ՞ք մի . ըսէք . . . :

— Ըհ, Պարոն . . . :

— Գուք կը հասկընաք, որ ես չեմ կրնար
գալ ձեր տանը մէջ հաստատվել ձեզ տաղտ-
կացընելու կամ ձեր վրայ լուծիւնը հարկ
դնելու, որ ոչ ձեր ախորժակացը կը վայլէ,
և ոչ ձեր տարիքին : Այդը, ուրեմն վաղը :

Ահսիլ առջևը նայեցաւ շառագուններով ու
ինծի չը պատասխանեց . բայց համոզված էի,
որ իր բերանը կը լռէր նէ ալ իր սիրտը ա-
ւելի շատ և ինծի շահաւոր կերպով կը խօսէր :

Հետևեալ օրը դարձայ նոր երգերով, քառ-
ուիշներով և մէկ քանի թատրերգութեանց մա-
սերով լրցուն հաստ ու գեղեցիկ տետրակով,
մը . — զանի Ահսիլին աչացն առջև բանալով
սկըսայ անոր բացատրել ամեն երեսի վրայ ե-
ղած նշանաւոր մասերը . — Առջի բերանը պաղ
կերպով մը մտիկ ըրաւ իս . բայց շուտ մը բը-
նականաբար իմ բացատրութիւններէս քաղած
օգտին տուաւ ինքզինքը :

Երբ տետրակը ամբողջ թղթատեցի, փունջ մը ձեռք առի, ու փոքրիկ վրձինով մը ցուցուցի ծաղկահասակ օրիորդին՝ ծաղկանց բոլոր գործարանները. ետքը իմ ծաղկի նկարիս օգնութեամբ անոնցմէ շատը լուծեցի : — Այսպէս, Ալեսիլին նոր գաղափարներու աշխարհին բանլիքը կուտայի, և վերջերը այնչափ մտադրութեամբ մտիկ կընէր իս, որ հօրը կերակուր պատրաստելը կը մոռնար՝ երբ Գաբրիէլ եկաւ իրեն իմացընելու թէ ընթրեաց ատեն էր : Այս ազդարարութիւնը զանի ցնցեց, բայց երիտասարդ գործաւորը փութաց անոր ըսելու թէ, մեզ անհանգիստ չընելու համար, խոհանոցին մէջ անոր տեղը բռնելու պարտաւոր կարծեր էր զինքը, ու ահն բան պատրաստ էր : Ալեսիլ շնորհակալ եղաւ անկէ մէկ նայուածքով մը, զոր շատ սուղ կը գնէի :

Անկէ դուրս ելած ատենս ինքիւրենս կըսէի. այս տգէտ գործաւորները, որ խօսք մ'ընել չը գիտեն՝ իրենց տիրուհիներուն հաճելի ըլլալու համար, գործք ու անձնանուիրման ցոյցեր կը փնտրուեն : Երբոր ես յուզական խօսքեր կը զրուցեմ Ալեսիլին, անոր բուսաբանութիւն և ներդաշնակութիւն կուսցընեմ, Գաբրիէլ ամանները կը լուայ, կօշիկները կը

փայլեցընէ; կերակուրը կեփէ և սենեակը կաւ-
լէ: Յայտնի է որ ասանկով մեր մէջը երկար
և շարունակ միճանք մը պիտի ըլլայ. այս պա-
տերազմը բաւական գէշ կուգայ ինձի, բայց
իրաւ որ յաղթութեան վարձքը այնչափ թան-
կագին է, որ բնաւ մէկ բանի մը մէջ տեղի
չը պիտի տամ իմ հակառակորդիս: Կը տես-
նենք ով պիտի ըլլայ յաղթողը, շատ աղէկ կը
յուսամ, որ խելացութիւնը շինականութեան
պիտի յաղթէ: — Բայց ըսելու եմ եղեր. շատ
աղէկ կը յուսամ, թէ մոլութիւնը առաքինու-
թեան պիտի յաղթէ: Սակայն իմ հօրս փիլի-
սոփայութիւնը զիս կը կուրացնէր ու տակաւին
չը գիտէի գեղեցիկը տգեղէն, և ոչ բարին
չարէն որոշել:

Գ

Հետեւեալ օրը ատաղցադործին տունը մտած
ատենս, տեսայ որ տունը տակն ու վրայ էր,
և Վիւսիլն ալ շատ հոգնած երեցաւ ինձի: Երբ
ընդ այս կը զարմանայի՜ Վ: յմօն հայրն ըսաւ
ինձի:

— Դո՛ւք էք, պարօն Կոմս, այս ամենուն
պատճառը. աղջիկս գիշերը ձեր երեկուան
բերած երգերու տետրակը սերտելով անցուց:

— Այլ ծաղիկներ քննելով, յարեց Վաբըրիէլ, որ կարասիքին վրայի փոշիները թոթվելով տեղերնին կը դնէր :

— Աթէ այս երկար հսկումը զանի չը հիւշնդընէ պիտի, և յիրաւի օրիորդ Աիւսիլն ալ իր քունը զոհեց իմ առջևս երգելու պատրաստըվելու համար նէ՛ շատ երախտապարտ եմ իրեն . . . :

— Ար լսե՞ս, Աիւսի՛լ, ըսաւ Այմօն հայրը, իբր թէ հրաւիրելով իր աղջիկը, որ զիս գոհ ընէ :

— Շատ գէշ կ'երգեմ, թոթովեց Աիւսիլ :

— Ընդհակառակն՝ կը հաւտամ որ դուք ըսքանչել, կերպով կ'երգէք, յարեցի, և ես ձեզի երբէք մտիկ ըրած չըլլայով, այս մասին պարօն Վաբրիէլէն տեղեկութիւն կ'ուզեմ :

— Ահ, պարօն, պօռաց Վաբրիէլ, սովալըլուկ մը հաց ուտելը կը մոռնայ, որպէս զի . . . :

Չը կրցաւ լմնցընել . վասն զի Աիւսիլ առապարեց անոր ետևն անցնելու, ճիտն 'ի վար կախվեցաւ իր երկու թևերն անոր ուտրուն վրայէն անցընելով, ու իր փոքրիկ ճերմակ ձեռքերովն անոր բերանը գոցեց :

— Բաւական լսեցի, երգելու էք, օրիորդ :

— Այո՛ , այո՛ , կրնայ երգել , ըսաւ Այս մօն հայրը յայտնի ցուցընելով իր աղջկան գեղեցկութեանը ու շքեղ դաստիարակութեան իրեն ազգած հպարտութիւնը :

Իրաւցընէ , իմ կարծածիս չափ իրեն աղաչել չը տալով , կէս օրին ատենները , Ալիսիլ , առաւ իր կիթառն , ու սկսաւ երգել : Իր սրտին առջի տազնապները , իրեն բանի մը սխալներ ընել տուին առջի բերան . բայց շուտ մը , մոռնալով որ զինքը մտիկ կ'ընէի՞ ինծի ցուցուց որ արժանի էր բոլոր իմ զմայլմանս : Շատ երկայնաշունչ չըլլալով ալ , իր համեղ ու ներդաշնակաւոր ձայնը , տեսակ մը հնչական յեղ յեղանք մ'ունէր , որ զանի մանաւանդ ախորժալուր կ'ընէր : Չէի գտներ և ոչ մէկ բառ մը ինծի ազգած զուարճութիւնը իրեն յայտնելու : Այնպէս զի երկու կերպով երջանիկ կը գտնէի ինքզինքս . երջանիկ՝ զանի մտիկ ընելով , և աւելի երջանիկ կը գտնէի ինքզինքս , մտածելով , որ էն դժուար բայլը առած էի , և յայտնի կ'երևար , որ ալ այս ծաղկահասակ աղջկան մտերմութիւնը ստացած էի . և յիրաւի , այս օրէն , մեր յարաբերութեանց մէջ այնպիսի անհոգութիւն մը մտցուց որ քիչ ատենէն անհաւատալի ընտանութեան մը

փոխվեցաւ :

Ահիզգէն , այս վարմունքը երկու կերպով
կը մեկնէի . կամ այս աղջիկը իմ կարծածիս
չափ սուրբ չէր . կամ ես իրեն բուռն սէր մը
ազգած էի : Իմ երկու կարծիքս ալ միօրինակ
սխալ էին . վասն զի շատ երկար չբըջեց՝ տե-
սայ որ այս անհոգութեամբ Վիսիլ ինծի ա-
ւելի յարգանք և զմայլութիւն կազդէր , քան
թէ երբոր էն աւելի խիստ պատկառանք մը ու-
նեցած ըլլար : Եսոր պատճառն ալ սա է որ ,
կիները մեզի հետ երեք կերպով և երեք առ-
թիւ կ'ընտանեանան : — Մեր կիներն ու մեր տի-
րուհիները մեզ սիրով կը զգուեն և միանգա-
մայն մեր միտքը , մեր սիրտն ու մեր զգաց-
մունքը իրենց կը գրաւեն . — Բողերը ցանկու-
թեամբ մեզ կը զգուեն , և միայն մեր զգաց-
մանցն աչք կը տնկեն . — նորահասակ աղջիկ-
ները վերջապէս մեզ կը զգուեն խաղալու
կամ կրթըվելու համար . միայն մեր միտքը
ինքզինքովնին կ'զբաղեցնեն , ու մեր վրայ ինչ
որ գտնըվի սուրբ ու մտքի վերաբերեալ՝ անոնց
ամենուն հետ ալ կրնան միաբանիլ , և խիստ
քիչ անգամ մեր զգացմանց վրայ կը ներգոր-
ծեն : Մենք անոնց վրայ կ'զմայլինք իբրև զե-
ղեցիկ պատկերներ կամ արձաններ . անոնք ալ

Նեղի ճաղիկներու պէս անուշ հոտեր կուտան ,
իրենց ձայնը մեզ կսքանչացընէ իբրև բաղթը
ներդաշնակութիւններ : — Ահրջապէս մենք զա-
նոնք կը տեսնենք , մտիկ կընենք , կղզանք՝ ա-
ւանց նշմարելու թէ կին են :

Իմ փորձառութիւնս ինծի կը ներէր ձեզի
կար բացատրութիւններ տալու այս նիւթիս
կրայ . բայց այս մէկ քանի մտածութիւնները
բաւական են ձեզի հասկըցընելու որ : Ահսիլին
ընտանութիւնը , իմ կիրքս չը գրգռէլէն զատ ,
ընդ հակառակն զանի տկարացուցին ալ : — Գո-
նէ ամիս մը այս կերպով մնացի , աւանց իսկ
կասկածելու որ իմ վրաս սասնկ նորանշան փո-
փոխութիւն մը կըլլար : — Արբոր այս բանը
տեսայ , սաստկապէս կշտամբեցի ինքզինքս :

Եւ իմ կիրքս աւելի գրգռելու համար՝
նքիրենս ըսի . եթէ իմ հայրս գիտնա՞ր . . .
իրկուան ժամը ինն էր (ըստ Եւրոպացւոց .
ստ մեզ՝ գոնէ գիշերին ժամը 3) և որովհե-
ւե մանկամարդ աղջիկը զիս գիշերն ալ կըն-
դունէր ցերեկուան պէս՝ միտքս զրի որ ան-
միջապէս երթամ , իմ անխելքութեանս վնասը
վատարկիմ : Աւստի դուրս ելայ , սրունգիս
ջիղերը լարելով , գլուխս բարձր բռնած բո-
ցավառ աչքերով , գոռոզութեամբ , վերջա-

պէս՝ ճշմարիտ մոլորեցուցիչի (գլխէ հանողի) մը պէս : Երգ մումուայով, գաւազանս ձեռքիս մէջ դարձընելով կերթայի . բայց Վիւսիլը սենեակը հասնելու քիչ մը մնացած՝ ըզգացի որ յանկարծ մէկը զիս թեէս բռնեց . ինքն էր, որ ուժով մը բաշելով զիս, ըսաւ ինձի . եկէք, եկէք :

— Ո՛ւր կը տանիք իս, պօռացի :

— Եկէ՛ք, եկէ՛ք միշտ :

Մեծ դիւրութեամբ հնազանդեցայ իրեն . ուստի բռնեցի ձեռքէն ու իր ուղածին պէս վազեցինք անցանք փողոյներէն, հրապարակներէն . շուտ մը քաղքէն դուրս ելանք, ու ծառուղիէ մը վեր ելնելէն ետեւ, աւելի նեղ ճամբու մը ամեն պտոյտներն անցնելով գեղեցիկ հարթ մարգագետին մը հասանք որ վարդասարդերու (զըքըմ չիչէի), վայրի վարդերու, և շէփորուկներու (լէյլաք) ծառերէ կազմըված խիտ ցանկով մը շրջապատված էր :

— Ըհա հասանք, ուր որ ձեզ բերել կուզէի . կը յուսամ թէ ասի անհանգիստ ընող տեղ մը չէ . բայց քիչ մը շունչ առնենք՝ ետքը կը խօսինք, ըսաւ ինձի Վիւսիլ :

Իր երկու փոքրիկ ձեռքերը կը բռնէի իմ իններուս մէջ, ինքը ինձի կը նայէր սողու մը

պէս ծիծաղելով . այսպէս լուռ մնացինք վայր-
կեան մը , ետքը մեր նայուածքը մեր բոլորը
զարճուցինք : Սէնդ—Մանտի վրայ նայող
Սօն—Ռօն ամրոցին բլուրին զազաթան վրայ
էինք . և լուսնին մէկ պայծառ լոյսը կը նե-
րէր մեզի անհուն հորիզոն մը նկատելու : Հա-
րաւային կողմը կը տեսնէինք . զառ 'ի վայր այ-
զեստանը , որուն գազաթը բարձրացած էր
հովաղացք մը . որ իր անշարժ թւերովը կը
նմանէր մեծ ուրուականի մը՝ պատրաստ մեր
վրայ իյնելու : Երևելքի կողմը սև գունով կե-
րևար Մէյլանի անտառը , որ պատերազմի
համար շարված հսկաներու բանակի մը կը
նմանէր : Եսի տեսած ատենս կարծեցի թէ
(երբորդ և չորբորդ Հենրիկոսաց ատենի) նի-
զակակցաց բանակը կը տեսնեմ , որոնք ա-
տենօք պաշարեցին այս ամրոցը , որուն մէնք
աւերակները ոտնակոխ կ'ընէինք . և ուր մեծն
Քոնտէ ամեն բան կորսնցուց բաց 'ի պատի-
ւէն : Եմեն բան լռիկ էր . ուրիշ բան չէր լըս-
վեր թէ ոչ հովտին մէջէն գալարելով անց-
նող գետին տարտամ կարկաջը , որուն մէջ
ամպերը ինքզինքնին կը դիտէին ու կանցնէին :

Մի և նոյն ատենի մէջ երկուքնիս ալ այս
կէս քօղարկված մեծ տեղապատկերը (բանօ-

ուամա) զխտելէն ետև , Ղիւսիլ սկսաւ ցատկըւտել , երգել և Ռիւրամին հետ կատակները ընել , որ իր անմեկնելի բարեկամն եղած էր : Ե.յս աղջիկը զխտելով կը կարծէի տեսնել այն գեղեցիկ ասաուածու թիւններէն մէկը որ զիցապաշտական ատեններուն մէջ , զիշերը բանաստեղծներուն ու սիպիլներուն կերելային :

Երբ երգելէն ու ցատկըւտելէն հոգնեցաւ սկսաւ բաղաբը զխտել , որուն վրայ կը նայէինք , ու վայրկեան մը մտածելէն ետև պուսաց . — Եմենքն ալ կը քնանան վարը . . . ո՛հ ծոյլերը , ի՛նչ գեղեցիկ ժամեր կը կորսընցընեն . . . ի՛նչու չեն վայելեր այս զուարճալի զիշերը , որուն մաքուր և բաղձրաբոյր օդը այնչափ բարիքներ կընէ . . . չեն հասկընար որ իրենց կենաց էն թանկագին մէկ մասը իրենցմէ կը փախչի ասանկով . թող մնան ուրեմն քնացած , իբրև մեռել իրենց մահճին մէջ . բայց ես թուշուններն ալ , իմ բարեկամներս ալ կուգեմ արթընցընել , որ իմ երջանկութեանս մասնակից ըլան . . .

Ըն ատեն բար ժողվեց ու իր բոլորտիքն եղած պրակներուն մէջ նետեց : Ետքը զառ ՚ի վայրին եգերբը երթալով , անկէ վար գլտոր .

ցուց ասպառածի կտորներ, որ մացառէ մացառ-
ցատկըւտելով հովիտը կը հասնէին . Ռիւրամ
ալ, իր կողմէն իր բարեկամին օգնելու համար
մեծ եռանդով հաչելով կը ցատկըւտէր .
Թռչունները սարսափած՝ կը Թռչըտէին . Վիւ-
սիւ բոլոր սրտանց կը խնդար . ես ալ, ոտքի
վրայ, իր ետեւը, անշարժ՝ անմեկնելի տազնապ-
ներ կը կրէի . հողիս բարի զգացմունքները
կընդունէի, և ես ինքզինքս ակամայ մաքրըւ-
ված կզգայի :

Յանկարծ ծաղկահասակ աղջիկը վրաս վա-
զեց ու ինձի ըսաւ :

— Չէք վախնար կոր Մետօն . ես շատ կը
սոսկամ . վարը, դա աւերակներուն քով վա-
զած ատենս, ուրուականի մը պէս բան մը տե-
սայ, որ հին պատին դէմէն անցաւ . . .

— Ընխե՛ք . ձեր ստուերն էր, որ լուսի-
նը հոն կը ձգէր :

— Գուք ուրուականներուն չէ՞ք հաւտար :

— Տէ՛ գնա, տղա՛յ, գուք անոնց կը հաւ-
տա՞ք :

— Ոչ . բայց ի՞նչ կը մտածէք, հոս վա-
րը եղած այն մեծ նկուղին (գետնի տակ տեղ)
բերանն եղած երկաթէ դուռին վրայօք, որ
մէկ գիշեր կը բացվի, հոն գտնելված անհուն

գանձերն երևնալու համար, որոնք հոն իջնելու համարձակող մարդը կրնար առնել... Ի՞նչ կըսէք այն հռովմէական թուփ ըսված ցանկին համար, որուն վրայ ամեն տեսակ գեղեցիկ կտաւէղէններ տարածված կը գտնուի երբեմն չէք զխօսեր նոյն տեղէն զոյգ մը սաւան (չարչաֆ) գտնող կնոջ պատմութիւնը...

Վերջապէս ի՞նչ կրնաք գտնել կորուսեալ ջրհորին վրայօք, որ երկաթէ դռան մօտերը կը բացվի... լրամ չէք որ մարդ մը հոն իջաւ ու պատմեց թէ անոր մէջ զէնքեր, թրմբուկներ տեսած էր, և հոն արտաքոյ կարգի ծայներ լրած էր, որ կարծես թէ իր ոտքին տակէն կը պօռային: Այսինք, Բնտօն, ի՞նչ կըսէք ասոնց համար:

— Կրտսիմ թէ վախը հորին մէջն իջնող քարդուն ցնորքներ տուած է. այն կինն ալ, որ հռովմէական թուփին վրայէն սաւանները գտաւ, մէկը խաբած է զանի, որ անտարակոյս այս նախապաշարման պահվելէն օգուտ մը պիտի քաղէր. իսկ այն երկաթի դուռին համար ալ, եթէ կ'ուզէք, կ'երթամ վերան կը նստիմ, քարով մը կը զարնեմ անոր, բոլոր դւերը կանչելով. պիտի լըսես որ մետաղը կը հնչէ, ու կը տեսնես որ կախարդական բան մը չէ:

— Ո՛հ, այդպէս մի խօսիք Անտօն, վրաս
զող կը բերէք կոր. ասկէ զատ ասոնք իսկա-
մաց կամաց աւելի կը սոսկացընեն կոր. ին-
ծի այնպէս կուգայ, որ մեր բոլորք ուրուա-
կաններ կը թափառին: Օն, երթանք հոն
վարը տա գեղեցիկ մարգին վրայ նստինք ու
ուրիշ բաներու վրայ խօսինք:

Քացինք նստանք Ալեքսիի որոշած տեղը:

— Ո՛հ, հիմայ, ըսաւ, խօսեցէք ինծի իս
զմայլեցընող աս աստղազարդ ընդարձակ եր-
կինքին վրայօք. ըսէք ինծի ամեն ինչ որ մար-
դուս միտքը կըցաւ գիտնալ բնութեան այս
անհամեմատելի սքանչելիքին վրայ. բացատ-
րեցէք ինծի ինչ որ դուք ալ կը մտածէք ա-
նոր վրայօք: Աս շատ գեղեցիկ է. ո՛հ, ըսէք
ինծի ինչ որ գիտէք ասոր վրայ:

— Իմ սիրելի Ալեքսի, բնաւ մէկը չկրնար Ա-
րարչին խորհրդոցը վերահասու ըլլալ. այս տի-
եզերքը շատ անհուն է մեզի պէս ոչինչի փոշինե-
րուն համար. այս տիեզերքը չափազանց կեանք
ու ներդաշնակութիւն ունի մեզի պէս անարդ-
էակներու համար, որոնց կազմութիւնը այն-
չափ անկատար է: Արք մենք կուզենք վերցը-
նել այն թանձր քողը, որով Աստուած կամե-
ցաւ իր գործերը պարփակել, ուրիշ բան

չենք կրնար թէ ոչ ենթադրել և միշտ պարապուծեան մէջ թափառիլ: Ուստի դուք կը տեսնէք իմ գեղանի բարեկամս, որ ես ձեռն ելել բան մը չեմ կրնար զիտնալ այս նիւթին վրայօք. և ասկէ զատ, առ ամենը ձեզի համար շատ ծանր բաներ են, իմ անուշիկ Վիւսիլ:

— Ո՛հ, Ընտօն, սակայն ես շատ կը փափաքէի զիտնալ թէ ինչպէս լուսինը միջոցին մէջ կրնայ այսպէս շարժիլ, ետքն ալ ո՞վ է Ըստուած, և ո՞ւր կը բնակի. Վիւսիլ ասոնք ըսելով միշտ ինծի կը մօտենար, ջղային սաստիկ յուզմունք ունէր և միշտ երկինքը կը նայէր:

— Երթալով դուք բարձրերը կենէք կոր, պատասխանեցի իր'ն. և ձեր երեակայուծիւնք ձեզ կը տանի անանկ գաղտնիքներու որոնց բացատրուծիւնը շատ դժուար է: Կը հաւտա՞ք ինծի, երբոր ըսեմ թէ Ըստուած՝ սէրն է. և ամեն անգամ որ սէրը հոգիները կը միաւորէ՝ երկինքն ալ նոր աստղով մը կը զարդարվի: Բոլոր բնուծիւնը սիրով կը նորոգվի, ծաղիկները սիրով կը բողբոջեն և սիրով կը մարին. Թուջունները իրենց զուարճալի գեղգեղանքը կը կազմեն սէրը երգելու

համար, մարդս ալ, այս թագաւորը, արարչութեան այս գլուխ գործոցը, սէրէն կը ծնանի, սիրոյ համար կապրի, և կը մեռնի՝ երբ ալ չը կրնար սիրով զօրանալ: Վերջապէս երկիրս սիրով ստեղծված է. ուրեմն սէրն է կենաց սկզբունքը և ամեն էակներուն ճշմարիտ արարիչը:

— Ո՛հ, Անտոն, դուք չար մ'էք, կը հաւտամ. բայց ուրեմն սէրն ինչ է:

— Մերը, իմ Ալեսիլ, երջանիկ տեսիլ մ'է, որ սիրված էակը զանի սիրողին աչացը կատարեալ կը ցուցընէ. այսպէս իմ Աղնիլ բարեկամ, սիրով է, որ ես երկրի ամեն ծաղկահասակ աղջիկներէն գեղեցիկ կը զտնեմ ձեզ. սիրով է, որ ձեր ձայնը երկնային ներդաշնակութեամբ լըցուն կուգայ ինծի. սիրով է, որ բոլոր ձենէ ինծի եկածները ապշեցուցիչ զգացմունք կրել կուտան ինծի:

— Ուրեմն դուք ինծի շատ կը սիրէ՞ք, կրկնեց Ալեսիլ վայրկեան մը արտաքոյ կարգի եղտնակով ինծի նայելէն ետև:

— Ո՛հ, այո՛, անչափ կը սիրեմ ձեզ, պօռացի, ու մարդ մը տեսայ որ դէպ 'ի մեզ առաջ կուգար:

Եյս անիծեալ երևոյթը իսկոյն հալածա-

կան ըրաւ այն հմայքն, որով երիտասարդ աղջիկը կը կախարդէի կոր : Ոտքի ելանք որ տեսնենք ով էր այն մարդը . բայց նոյն վայրէկնին աջ կողմը դարձաւ ու ծառերուն ետեաներևութացաւ :

— Կը տեսնէք որ , ըսաւ ինծի Վիւսիլ , իմ ստուերս չէր , հասաւ այս մարդն էր , որ ես տեսայ՝ պատին առջևէն կանցնէր կոր . . .

— Կարելի է :

— Քաղաք մտնենք , ետեւս եկէք , պուայ , ՚ի քաղաք տանող ճամբուն մէջ նետովելով :

Հինգ վայրկեան ետքը իր սենեկին մէջ էր , ու պատուհաններուն փեղկերը գոցելով երթաք բարով կըսէր ինծի :

Ո՞վ է այն մարդը , որ այնչափ ճախողաբար եկաւ իմ գործս աւրելու . դիպուածով հոնկէ կանցնէր , չէ նէ մեր վրայ կը հսկէր . . . :

Եյս տեսակ հարցմունքներ կընէի ինքզինքիս , տունս մտած ստե՛ն :

Հետեւեալ օրը ուշադրութեամբ Գաբրիէլը դիտեցի . վասն զի գիշերը անոր վրայօք կասկածներ ըրած էի . բայց իր սովորականին պէս , շատ քաղաքավարութեամբ վարվեցաւ հետս և Վիւսիլին ալ ունեցած հոգերուն մէջ բնաւ մէկ տակսութիւն մը չըրաւ . ուստի ես ալ տարակու-

սանքի մէջ միայն մնացի : Սակայն , որովհետեւ այս երիտասարդ գործաւորէն զատ ուրիշ մէկը հոգ չը պիտի ընէր Վիւսիլին հետ իմ ունեցած յարաբերութեանցս համար՝ հետեցուցի , որ եթէ այն ինքզինքը ծածկող մարդը նորէն երևնար՝ իրմէն ուրիշ մէկը չը պիտի կրնար ըլլալ , և վերջապէս որոշեցի , որ միշտ զգուշութիւն ընեմ :

Քանի մ'օր ետքը , իրիկուան ժամը տասնին (զիշերին չորսին) գացի Վիւսիլին սենեակին փեղկերուն զարկի . բացաւ ու եկաւ պատուհանին վրայ նստաւ :

Ղուսինը , որ ամպերուն հետ կը խաղար , կարծես թէ ինծի հետ կատակելու էր ելած : Մէյմը կը լուսաւորէր Վիւսիլը ու կարծես թէ ինծի կըսէր . ադէ՛կ դիտէ ատի . տես ինչպէս գեղեցիկ է և շնորհալի . մէյ մ'ալ զանի ստուերին մէջ կը թողուր , կարծես թէ զանի իմ աչքէս պահելու համար :

Նոյն վայրկեանին , շատ մը երիտասարդներ փողոցը թափեցան՝ աամկական երգ մը երգելով : Ընոնց աղօղակներէն արթնցած՝ Վիւսիլ իսհրեց ու պատուհանը դոցեց : Ընէ՛ծք . պօռացի տան մը պատին անկեանը ետեւը պահվըտելով , ուրկէ կըզէի տեսնել ո՛վ են այս երգողները : Երբոր

առջևէս անցան՝ մէջերնին գտայ Քաբրիէլը ,
 յուզմունք և սաստիկ մը զգացի սրտիս մէջ .
 վասն զի այս դիպուածը բոլորովին պատահա-
 կան ալ եղած ըլլար՝ գրեթէ ճշմարտութեան
 փոխեց այն կասկածներն որ ունեցած էի այս
 երիտասարդ գործաւորին վրայ Մօն-Ռօնիամ-
 րոցին արկածէն ՚ի վեր : Այս վայրկենէն՝ ալ
 չէ թէ Ղիւսիլին երկչոտ ու քաղաքավարնշա-
 նածը կը ճանչէի ես զանի՝ հասկա նենգաւոր ,
 մտադիր և վտանգաւոր հակառակորդ մը : Եւ
 իրաւցընէ շուտ մ'ալ առիթ ունեցայ համոզ-
 վելու որ ես ինքզինքս Ղիւսիլին հետ մինակ
 կարծած ատենս , անի միշտ իմ ետևս էր : Այս
 անգուլ լրտեսութիւնը առջի բերան անտանե-
 լի երևցաւ ինծի . բայց քիչ քիչ ալ փոյթ չը-
 րի . վասն զի գրեթէ առանց իմ զիտութեան իմ
 գէշ կիրքերս կը մարէին , և եղբայր մ'ալ կըր-
 նար կենալ իմ Ղիւսիլին հետ բոլոր խօսակցու-
 թիւնս մտիկ ընելու : Այնան գեղեցիկ և քաղցր
 երեկոյթներն ալ անցեր էին . և ձմերան ցուրտ
 գիշերներուն մէջ ալ չէի կրնար Ղիւսիլին հետ
 պտըտիլ , և ոչ իր պատուհանին առջև երթալ
 խօսիլ . և այնպէս որ քաղաքին ազնուականաց
 սրահներուն մէջ տրված պարաւոր երեկոյթնե-
 րուն մէջ զանի ընդունել տալու ճարը մտածել

սկսայ : Գժուար չեղաւ ինծի անոր հրաւէր մը
 ձեռք բերելը վասն զի բարձրաստիճան երի-
 տասարդուհեաց ամենուն ալ բարեկամն էր :

Ո՛վ կրնար զանի արհամարհել մտածել...
 չէ՞ մի, որ Վիւսիլ անմեղութեան, հանձարի,
 բաղքութեան և շնորհաց յարացոյց մ'էր... :
 Մասնկով կը յուսայի դարձեալ քիչ մը ժամա-
 նակ անցընել այս աշխիւ մանկամարդին հետ,
 որ սակաւ առ սակաւ աւելի շատ կը սիրէի .
 բայց Գաբրիէլը հաշուի չը դրի . ասի իրա-
 ւամբ դէմ կեցաւ մեծ աղղեցութեամբ, որ Վիւ-
 սիլ կաքաւնեցու մէջ չը մտնէ :

— Վարպետ, ըսաւ Վյոմոն հօրը, եթէ
 խօսքիս կը հաւտաք, թողելու չէք որ ձեր աղ-
 ջիկը այն բազմութեան մէջ մտնէ : Հոն բնաւ
 մէկ բան չը կրնար շահիլ . բայց ամեն բան
 կրնայ կորսնցնել : Հարուստ երիտասարդք զա-
 նի կը խաբեն իրենց գեղեցիկ խօսքերովն, և
 եթէ ազատ մնայ անոնց հրապոյրքէն՝ անշուշտ,
 այն պայծառ խնջոյքներուն մէջ, զարդարանքի
 ախորժակ մը պիտի ստանձնէ, որ զանի թշուառ
 կրնեն քանի որ մեզի հետ ապրի, երբ մենք
 այսչափ աղքատ ենք ու հաստ և շինական լա-
 թեր հազած : Վերջապէս, եթէ պարկեշտ մը
 նայ կուզէ՝ իր տեղը այն ոսկեզօծ սրահներուն

մէջ չէ . հասպա մեր քովը , կար կարելու ,
տունը տեղը նայելու , և մեր կերակուրը հո-
գալու :

— Չը պիտի երթայ , պուռայ Այսօն հայ-
րը . քու նշանածդ է , գրեթէ քու կինդ , քե-
ղի անհաճոյ բան մը ընելու չէ :

Յիրաւի , քանի որ հրաւերի տոմսակները
կուգային՝ Այսօն հայր զանոնք կը պատուէր .
բայց Վիւսիլ իր կայտառ զուարթութիւնը կը
կորսնցնէր . դեղնեցաւ , և իր գեղեցիկ կապու-
տակ աչերն , որ երբեմն այնչափ սաստիկ պայ-
ծառութեամբ մը կը փայլէին՝ հիմայ նսեմ ու
նուաղած կերևային : Աէրջապէս բռնեայն կը
տազնապէր և իր առողջութիւնն ալ տեսանելի
կերպով կը նուաղէր : Իր ցաւերը սաստիկ կը
շարժէին իմ սիրտս . բայց Գաբրիէլ ինէ շատ
աւելի դիւրազգաց էր անոր վիշտերուն . ուստի
աւելի նախամեծար սեպեց զանի կորսնցընելու
վտանգն աչքն աւնելը , քան թէ զանի այնպէս
տանջըվելու թող տալը :

— Ըստուծոյ պահպանութեանը յանձնելով ,
լսաւ Այսօն հօրը , թող տալու է զանի իր
ուզածն ընէ . վասն զի եթէ աւելի երկար ա-
տեն դէմ կենանք իր փափաքանկաց՝ կարելի է
կը մեռնի :

— Ի՞նչ վեհանձնութիւն... Ի՞նչ ընդ-
դիմակութիւն իր սիրոյն մէջ և իմ սիրոյս ,
որ միայն անձնասիրութիւն մ'էր , վսիւրբի
կոշտ ծարաւ մը ...

— Ո՛հ . պատկերհան մը շատ սուղ կը
զնէր երջանկութեան այն կայծակը որ ցայ-
տեց Ղիւսիլին խոշոր կապուտ աչերուն մէջէն ,
երբ հայրն իրեն ըսաւ որ պատրաստըվի երե-
կոյթի երթալու . խօսք տուած էի , որ իր
հագուիլը լմնցուցած ատենը երթամ զինքը
տեսնեմ՝ երբ սենեակը մտայ՝ արդէն ոտքն
անցուցած էր . իր գեղեցիկ փոքրիկ մետաքս-
եայ կօշիկներն ու իր պարզ ճերմակ շրջաս-
զեստը , որ իրեն շատ աղէկ կը վայլէր : Ի՞նչ
պէս զինովցած էր երջանկութեամբ , ինչպէս
կը ցատկըռտէր երգելով... :

— Ինձի վաբ մը պարել տուէք նայինք
գիտե՞մ , ըսաւ ինձի ... բազկացս մէջ առի
զանի... Գիւօյցուհի մը աւելի բարակ , աւել-
լի թեթև աւելի շնորհալի չէր ըլլար , և ան-
կէ աւելի աղէկ չէր դառնար եղանակին հետ :

Գաբրիէլ , որ լուութեամբ մեզ կը դի-
տէր , տրտում ըլլալու շատ պատճառներ ու-
նէր նէ ալ՝ կը խնդար , և Ղիւսիլի երջանկու-
թեամբը ինք ալ երջանկացած կերևար :

Ետենը կանցնէր . մագճիւսը եկաւ ծաղկա-
հասակ օրիորդին մետաքսաթել խարտեաշ մա-
զերը վարպետութեամբ շտկելու . կարապի
մորթէ ձեռնոցը դրաւ , զգուշութեամբ ծած-
կեցի զանի իր վերմակովը ու ճամբայ ելանք :

Յուրտ ու մութ էր . բայց Վիւսիլ ամե-
նեին հոգ չէր ըներ . առաջ կը վազէր . բար-
ձրը ձայնով խնդալով մեզի կսպասէր . և եր-
բոր իրեն հասնէինք՝ նորէն կը փախչէր մէկ
խաբող սքանչելագեղ ոզիի մը պէս : Բայց
կաբաւատեղիին դռանն առջև , յանկարծ վար-
մունքը փոխեց :

— Երբէք ներս չը պիտի մտնեմ , շատ
կամչնամ , ըսաւ ինծի :

— Տէ , դուք ալ , տղայ , հիմայ ձեր երի-
տասարդ բարեկամուհիները պիտի գտնէք , ե-
կէք , ձեզ անոնց ներկայացընեմ :

— Ո՛հ , ո՛չ , ո՛չ , չեմ համարձակիր :

— Իրաւցընէ , դուք շատ ծաղրելի էք :

— Ես պատուհաններուն առջև կը պտը-
տիմ Քաբրիէլին հետ . նուագածութիւնը մտիկ
կընեմ . բայց մտնել չեմ ուզեր :

Կուզէի զանի սրահին մէջ քաշել . բայց
բողոր իր ուժովը դէմ կեցաւ . և քիչ մ'ալ
ստիպէի նէ պիտի լար : Ըն առեն մինակ ներս

մտայ , ու մեծ բանի մը տեղ զնեյուս դէմք մը
չը պուցընեյուս՝ բանի մը աղջիկներու զուպեցի
թէ , իրենց մէկ ընկերուհին դուռն էր , ու
ներս մտնելու չէր համարձակիր :

— Ենտարակոյս , Ալիսին է , պուպային
գուրս վագելով . վայրկեան մը ետքը , ներս
մտան իմ գեղանի վէսիս (նաքրս) հետ : Արը
տին աղմուկէն իր սիրուն դէմքը վարդացած
էր . բայց զանի ընդունելու համար եղած փոյ
թը շուտ մը ցրուեց անոր խուովութիւնը և
շուտ մը երջանկութենէն ու ցնծութենէն նշո
ղազարդեցաւ : Ի՞նչ գեղեցիկ էր . Եստուած
իմ , ի՞նչ գեղեցիկ էր . տակաւին կը տեսնեմ
զանի զուարճութեամբ խելքը գլխէն գացած ,
որ թւիս կը կապվի ու կըսէ , ի՞նչ երջանիկ
եմ , Ենտօն , ի՞նչ երջանիկ եմ . . . կը տես
նեմ տակաւին , ուրախութենէն ճառագայթար
ձակ իր գեղեցիկ աչքերը . կը տեսնեմ կայ
տաւ և զուարթ շնորհալի կերպով կաքաւին
մէջ կը նետովի : Խոստովանելու եմ , որ այն
իրիկունը , ինծի այնչափ գեղեցիկ երեցաւ ,
որ բոլոր հոգւով անկեղծաբար զմայլեցայ .
զանի դիտելով ինքիբենս կըսէի . ես անոր կու
տամ իմ անունս , իմ բաղդս , և այս շքեղ բաղ
մութեան թագուհին կըլլայ :

Աւար . Աստուած զիտէ ինչ որ եղաւ . . .
Երեկոյթին կէս եղած ատենները , Ալեսիլ
Թեթեւ անհանգստութիւն մը զգալով՝ իրեն ա-
ռաջարկեցի իմ տունս երթալ . որ առանց
անվտոահութեան մ'ընդունեց :

Սարգսսպանին առաջին շարժումը , երբ
ոճիր մը գործեց՝ իր զոհին զիակը պահելն է .
բայց էն ծածուկ եղեուն ալ կը յայտնըվի .
Աստուծոյ աչքը ամեն բան կը տեսնէ . և որ-
պէս զի մարդկային արդարութիւնն ալ կա-
տարվի՝ երբէք մինակ չը տեսներ . միշտ կը
բաշէ վկայ մը իր աստուածային լուսոյն ճա-
ռագայթին մէջ , որ էն մթազին տեսարան-
ներն ալ կը լուսաւորէ :

Իսկ ես՝ այս բարոյական ճշմարտութիւն-
ները մտածելէն շատ հեռու էի , երբ ալ իմ
սենեակս մտնելու համար , Ալեսիլին եղած սե-
նեկէն դուրս ելնելով , ճամբուս մէջ տեղը
մարդ մը տեսայ կայնած . այս մարդը Գաբ-
րիէլն էր , տժգոյն , աչքերը վայրենացած՝
ձեռքը ատրճանակ մը :

Ե

Այս երիտասարդ բանուորը ճանչելով , եր-

կիւղն ու խղճի խայթոցները զիս բռնեցին ,
 տարօրինակ զող մը բոլոր մարմինս ցնցել ըս-
 կըսաւ . սակայն առանց վարանելու անցայ դա-
 ցի . Գաբրիէլ ալ , սպառնական արձանի մը
 պէս անշարժ կեցած՝ թող տուաւ որ անցնիմ :

Ինչո՞ւ համար Վիսիլի նշանածին արդար
 վրէժխնդրութենէն ազատեցայ այսպէս . . . Եսի
 առջի բերան անմեկնելի գաղտնիք մ'եղաւ
 ինծի համար , որ ետքէն շատ աղէկ հասկըցայ :
 Գաբրիէլ իս չսպաննեց . վասն զի նախ իր առ-
 ջեէն առանց վարանելու անցայ . բայց ասկէ
 աւելի իս զտրնելի իրեն արգիլողը , մեր մէջն
 եղած հարստութեան ու աստիճանի տարբերու-
 թիւնն եղաւ : Աթէ ես ալ , իրեն պէս , սոսկ
 բանւոր մ'եղեր էի , անշուշտ մեռած էի :
 — Եյս վերջին պատճառը , կարելի է , ձե-
 ղի ոչինչ բան մ'երեւի . սակայն կատահովցը-
 նեմ ձեզ , որ շատ իրաւ է և խիստ աղէկ մը
 տածված : Տեսէ՛ք տշխարհիս մէջ , Քուանսայի
 մէջ , Բարիզի մէջ անգամ , բանւոր մը իր հա-
 լատարներէն մէկը զտրնելու աւելի դիւրսպատ-
 րաստ է քան թէ հարուստ և կրթըված մէկը :
 Եսի ողբալի նախապաշարմունք մ'է , որ աւա-
 տական ազնուապետութենէն կուզայ մեզի :

Հին ստրուկները , որ այսօր ազատ՝ ժողը

վուրդը կը կազմեն, դժբաղդաբար տակաւին չեն
հասկընար ազատ մարդու արժանիքն ունենալ
նին: Միշտ պատրաստ են խոնարհելու հա-
րուստներուն առջև, որոնք ատենօք իրենց տէ-
րը կը կոչէին: Հաւասարութեան ճշմարիտ
զգացմունքը անոնց քով միայն գինով եղած ա-
տեննին կարթննայ. բայց ան ատենն ալ ին-
քըզինքնին զուպէլ չը գիտեն. ու ձեզի հետ եղ-
բօր պէս իբր թէ վարվելով, ձեզ կը նախատեն:

Ընկերութեան երջանկութեանն համար,
պէտք էր, որ ժողովուրդը քաղաքակրթեալ
մարդու ճշմարիտ արժանիքին մէջ ինքզինքը
պահէլ գիտնար, առանց անասնական խոնար-
հութեամբ մը ցածնալու և ոչ առանց մեղապարտ
ամբարտաւանութեամբ մը բարձրանալ ուզելու:

Եստուած տա՛ր, որ օր մը ասի տեսնէիք
այսպէս Քուանսայի մէջ, դուք՝ որ երիտասարդ
էք...

Գանք Գաբրիէլին. ի՞նչ ընելու էր...
հարուստ մարդոց մէջ, մենամարտութեամբ ի-
րար կսպաննեն. յաղթողը քանի մը ամսու բան-
տարկութեամբ կը բաւէ այս ոճ իրը ու այս
պարագային մէջ իր պատիւը չը կորուսելէն
զատ, անկէ կելնէ միշտ Եփեմ երէմի ըսվելու տե-
սակ. մը համբաւով, որ շատ աղէկ ընդունելու

Թիւն գտնել կուտայ իրեն բազմութեան մէջ , մանաւանդ կանանց մէջ :

Իայց իրեն պէս սոսկ բանւորի մ'ու ինծի պէս Պէօլոսնի կոմս եղողի մը մէջ , բանը ուրիշ կերպով կը կատարվէր . ինծի հետ մենամարտիլ չէր կրնար . միայն իս սպաննել կըրնար . ան ատենն ալ կախադանն ու անպատուութիւնը իրեն կսպասէին : Էս ալ դարձեալ ընկերական սոսկալի նախապաշարում մը չէ՞ք մի տեսներ : Կարելի է ինծի պիտի ըսէք թէ բանւորն ալ կրնար հարուստի մը պէս շատ դիւրութեամբ իս մենամարտութեան հրաւիրել . բայց կը պատասխանեմ որ ընկերական նախապաշարումները սն ատենը ինծի կը ներէին , աղնուական ըլլալովս , որ ես ծաղրեմ անոր հըրտէրը : Եւ այս կրկին անարգանաց համար դարձեալ կամ իս պիտի սպաննելու ելնէր , կամ անպատիժ թողնէր :

Ի՞նչ ընելու էր ուրեմն . . . ահա այս հարցմունքը կընէի ես ինքիւրենս , երբ սպասաւորս ինծի նամակ մը տուաւ . հասցէին դրութիւնը իս խումկեց , դողդողալով բացի , և ինչպէս որ ձեռքս աւաճիս պէս կասկածեր էի , այս նամակը Գաբրիէլէն էր :

« Մենք, բանորներս, կը գրէր ինծի, բոլոր մեր
 « սիրտը կուտանք միայն մեկ սիրոյ մը, որ կը
 « գանազանի մեր բնութեանն համեմատ. եւ ան-
 « գամ մը այս տիրապետող կիրքը մեր ներսիդին
 « հաստատվելէն ետէս՝ միայն անոր համար կապ-
 « րինք. բոլոր մեր կեանքը անոր կը վերաբերի
 « կատարելապէս: Ես, Լիւսիլը կը սիրէի. ան իս
 « բոլորովին երջանիկ պիտի ընէր. բայց դուք գա-
 « նի անգրութեամբ յափշտակեցիք ինե, եւ հիմայ
 « բոլոր իմ ապագաս աննպատակ է: Եթէ իմ կը-
 « րօնքս բող տար, ինքզինքս մեռուցած էի: Աստ-
 « ուած՝ որ ինծի կեանք տուաւ, էրք հաճի նե՝
 « ան ատենը կ'առնէ: Ուստի ուրիշ բան չեմ ու-
 « գէր, եթէ ոչ բողույ այս վայրերն, ուր այ չեմ
 « կրնար ապրիլ. եւ մեկնելէս առաջ, կուգամ, ոչ
 « թէ ձեզ անիծելու, վասն զի կը յուսամ որ ձեր
 « խղճմտանքը ուշ կամ կանուխ, իմ վրեժս պիտի
 « առնէ ձեռն. իմ նամակս միայն ձեզ աղաչելու
 « համար է, որ երբէք երեսի վրայ չը ձգէք Լիւ-
 « սիլը: Անոր երջանիկ ըլլայը գիտնամ նե՝ նուազ
 « պիտի ցաւիմ: — Կերբամ ասկէ իբր թէ ճամ-
 « բորդութիւն մ'ընելու Փռանաայի մեջ. պիտի բռն-
 « նազատեմ ինքզինքս Լիւսիլը բնականաբար մոռ-
 « նայու. եւ կը յուսամ, որ դուք երբէք չը պիտի
 « բողուք իրեն կասկածելու, որ ես իր յանցանքը

« կը ճանչեմ: Ձեզի համար, դարձեալ կը գրուցեմ,
« մեր խղճմտանքը օր մը շատ սուղի պիտի նըս-
« տեցնէ մեզի մեր ինէ յափշտակած երջանկուքի-
« նը: Անգամ ա՛յլ կը կրկնեմ. գոնէ Լիւսիլն եր-
« օջանիկ ըրէք » :

ԳՍ.ԲԲԻԵԼ

Ըյս նամակը, որ առհնայն իր տձև պար-
գութեամբը յառաջ բերի, կը ցուցնէ՞ արդէօք
թէ Գաբրիէլ յիմար կամ վատ մէկն էր...
առջի բերան այնպէս կը կարծրվի, բայց աղէկ
մտածելով, ընդ հակառակն կը հասկըցվի, որ այ՛
նամակը էն նուրբ միտք մը էն ազնիւ վէհանձ-
նութեան միանալով գրէլ տուած էր: — Ըր-
դարև ի՞նչ կրնար ընել երիտասարդ բանու-
րը... իր նշանածը ալ այնուհետև իր սիրոյն
անարժան ըլլալով, պէտք չէ՞ր որ զանի բըր-
շովին ինքիւրեն թողնէր իրեն պահելով անոր
մեղքին թողութիւն տալը կամ՝ զանի վաճառելը
թէ որ օր մը իր կամքովը ու զղջալով իրեն
գար: Ըսկէ զատ իս սպաննելու ըլլար նէ,
ինչպէս արդէն ալ ըսի, ՚ի կախաղան կը մատ-
նէր ինքզինքը և չէր կրնար Վիսիլին ալ պա-
տիւր տեղը տանիլ, որ եթէ իս կը սիրէր նէ՞
կրնար զանի անիծել ալ:

Ուրեմն ամենէն աղէկ ճամբան փախչին էր .
 և իր մեղաւոր նշանածը ինծի յանձնելով փախ-
 չին ալ Քաթրիէլի գեղեցիկ հոգւոյն արժանի
 էր : Իր նամակը իրաւընէ իմ խիղճիս խայ-
 թոցներն եւելցուց և ինծի շատ մը ուրիշ մը-
 տածութիւններ ալ աղչեց , որ դուք կըր-
 նաք գուշակել :

Մտքի այս խռովութեան մէջ , կը մտածէի
 նաև թէ ինչպէս նորէն պիտի կրնամ տեսնել
 Ղուսիլն , և շուտ մ'ալ այս գաղտնիարն եղաւ
 իս ամենէն ևեւ տանջողը : Եւ յնպէս կուգար
 ինծի որ չը պիտի կրնայի իրեն հետ խօսիլ ,
 և ոչ երեսը նայիլ . կը վախնայի նաև , որ
 չըլլայ թէ բան զրուցած ըլլայ իր հօրը . բայց
 սովորական ժամուն ատաղձագործին տունը
 չերթալով կրնար ըլլալ որ իր կասկածներն ար-
 թընցընեմ . ուստի որչափ կը վախնայի կոր ալ
 նէ՛ ելայ դացի աշխատելով որ հանդարտ ու
 բնական դէմք մ'ունենամ : Մերտս կը բաբա-
 խէր կուրծքիս մէջ , երբ դուանը սեմոց վրայ
 դրի ոտքս : Վերջապէս ներս մտայ : Տեսայ
 որ Ղուսիլ քիչ մը դեղներ էր , ու սիրտը
 կոտրած էր . բայց ինծի ցուցուցած դժգո-
 հութեան միակ նշան իս բարևելու ատեն , քիչ
 մը շրթունքները ծռմուկելով ոււուցուց : Խեղճ

աղջիկ, իր յանցանքը չէր հասկընար... Գլխի
թիւն անտարբերութեամբ խօսեցաւ ինծի
Գաբրիէլին մեկնելուն վրայօք. ու իր սովորա-
կան աղնուութեամբը գգուեց իս :

Են ատենը համողվեցայ որ իս կը սիրէր,
և ես բոլորովին զատած էի զանի իր նշանա-
ծէն. կրնա՞ր անկէ զատ ուրիշ բան մ'ըլլալ...
քիչ մը կըթուլիւն առնող աղջիկ մը կըթը-
ված մարդը տգէտէն նախամեծար չը՞ պիտի
համարի միշտ : Պէտք էր որ գործաւորները
աղէկ ճանչած ըլլային այս ճշմարտութիւնը,
և չընդունէին իրենց տունը հարուստ երի-
տասարդները, որ շատ անգամ, ափսո՞ս, գլխէ
կը հանեն իրենց աղջիկները և կընետեն զա-
նոնք անամօթ մոլեգին կանանց մէջ, որոնք կը
վխտան մեր քաղաքներուն մէջ :

Ե. յո՛, Վիսիլ իս կը սիրէր, վասն զի ե-
թէ մեզ չը սիրող մէկ աղջկան մը վրայ բա-
նեցնենք մեր հրապոյրքը, մեզի գէ՛մ անմարե-
լի ատելութիւն մը կունենայ ու յաւիտեան ա՛լ
մեզ տեսնել չուզէր :

Եթէ ընդհակառակն, մեր գոհը մեզ կը
սիրէ՞ շրթունքներուն ծայրովը մեզի խոժոռ
դէմք մը կը ցուցընէ, մեզ մէկզի կը հրէ,
բայց իր սիրտը միշտ մեզի հետ է :

Վիւսիլին սէրն ալ զրէթէ այս կերպով
զարգացաւ :

Վէց ամիսի չափ կար որ ես այս անպա-
տում երջանկութիւնը կը վայելէի, երբ իմ
հայրս գիտելով իմ 'ի Սէնդ—Մանտ յաճախե-
լլա, և տեսնելով, որ թողած եմ բոլոր իմ
սովորական զբօսանքս, կասկած քրաւ որ ես
սերտ կապակցութիւններ ունեցած եմ ու քիչ
ատենէն իմացաւ իմ Վիւսիլին հետ ունեցած
սէրս :

Հոռտ մը իս բովը կանչեց՝ ձանձիր խօս-
քերով իր սովորական խրատները տալու :

— Հատ բա՛ն . կ'երևայ որ դուն գերի
կ'ըլլաս տաավեց տարու աղջկան մը դուն որ,
ինչպէս տեսայ, առանց վերքերու ելար Ռա-
րիդն էն լիրբ առիւծուհիներուն դահլիճէն :
Նսի վերջին աստիճան ծաղրելի բան մ'է :

— Թողութիւն կը խնդրեմ, պատասխանե-
ցի իրեն, ՂՀմարիտ է այն ծաղկահասակ աղ-
ջիկը ճիրաններուս տակ առի, բայց ամենեւին
սիրահար չեմ անոր :

— Ն'հ, ա'հ, յարեց . մարդ ոչ որսը կը
մոռնայ, ոչ իր շուները և ձիերը՝ եթէ սիր-
տը կապված չըլլայ բոլոր ատենն հոն անցը-
նելու տեղ մը : Նս մէկդի, ինծի ցուցընելու

համար որ դուն ըսածիդ չափ ազատ ես՝ ամիս մը դղեակը պիտի կենաս :

Հայրս իր որոշմանցը մէջ անյողդողդէր . ուստի պարտաւորեցայ առանց պատասխանի իր հրամաններուն համակամ ըլլալու , թէպէտ Ղիւսիլէն այս անջատումը ինծի շատ տաժանելի եղաւ և ինծի անկարելի ալ երեցաւ :

2

Ընմիջապէս թղթակցութիւն մը բացի ծաղկահասակ օրիորդին հետ : Ընջին օրը ցաւերնիս կը յայտնէինք իրարու . երկրորդ օրը ցաւերնիս կրկնապատկեցաւ . երրորդ օրը ալ չէինք կրնար առանց իրօր տեսնելու ապրիլ : Ուստի հագիւ իր սլառկելու սենեակը քաշված էր հայրս՝ որ պատուհանէն վար ցատկեցի ձի հեծայ , և երագեցով իս Ղիւսիլէն զատող երեք քիլոմէթրը շուտ մ'անցայ : Գիւրաւ կը հասկընաք որչափ մեծ եղաւ իմ երջանկութիւնս , երբոր նոյն խորամանկութիւնը հետեւի ալ զիշերներն ալ գործածելու կարող եղայ : Ըսանկով իմ գերութիւնս մեծապէս թէթեցաւ : Իմ հայրս կը կարծէի թէ ասի չէր իմանար : Ես զոնի իրաւցընէ խաբված կը

կարծէի, բայց ինձի ըրած արդեւթը վերցընելու ատենէն բանի մ'օր առաջ, շատ շփոթեցայ, երբոր ծանր կերպով մ'ինձի պաշտօնական նամակ մը տուաւ, որով ինձի հրաման կըլար, անյապաղ 'ի թուրք երթալ ու անկէ նաւ մտնել: Են ատեն դիւրաւ հասկըցայ, որ իմ հայրս բոլոր իմ գաղտնիքներուս հմտացեր էր, և այս հրամանը հանել տուեր էր պաշտօնէին: Մայրս ալ հօրս համակառ եղած էր. ինչու որ իմ մեկնելուս համար ամեն բան պատրաստ էր: Իմ կաշիէ սնտուկներուս բանլիքը ձեռքս տուին, որոնց մէջ մեծ հոգածութեամբ կարգի դրված էին իմ ձերմակեղէններս ու ուրիշ հանելիքներս:

Հաղիւ քիչ մը ժամանակ ունէի երթալ իմ խեղճ Միւսիլիս մնաս բարով մ'ըսելու, որ սակայն իմ կարծածիս չափ չը տրտմեցաւ. վասն զի շատ ուշ կըցայ հասկընալ որ, պարագայներուն համեմատ, իր երևակայութիւնը որչափ վառվառն, բանաստեղծական ու հանձարեղ էր նէ՞ իր դատումն ալ այնչափ ուղիղ էր:

— Կը տեսնես, բարեկամս, ըսաւ ինձի, որ ես քու պաշտօնիդ ընթացքին պահանջմունքըն հասկընալու չափ խոհեմ եմ. մեր սէրը

երկրորդական տեղ մը բռնելու է բու կացու-
թեանդ մէջ: Այս զատիկը բոլորովին բնա-
կան է, և առանց մեծ պատճառ մ'ըլլալու,
միայն քանի մը օր հեռանալու ըլլայիր նէ՞ որ-
չափ դժուար պիտի գար նէ՞ հիմայ անկէ քիչ
դժուար գալուն նայիմ պիտի: Աւրեմն ճամբայ
եւ, իմ յիշատակս քեզ չը թողնէ, ես ալ կա-
ղաչեմ զՆստուած, որ բու կենացդ վրայ հսկէ:

— Իմ սիրելի Ալեսիլ, պօռայի, քեզ
թողնելէն առաջ, շատ կը փափաքէի, որ իմ
անունս ու հարստութիւնս ընծայե՛մ քեզի...
իմ խօսքերս անկեղծ էին, վասն զի եթէ ազատ
եղած ըլլայի, անմիջապէս անոր հետ պիտի ա-
մուսնանայի:

— Իմ ամենասիրելիս, պատասխանեց ին-
ծի, ես փառասէր չեմ ամենևին. ես քու հա-
րստութեանդ չեմ փափաքիր. միայն բու սէրդ
կուզեմ ես: Իմ ուսերս թէ տաւիշով (գատի-
Քէ) ծածկըված ըլլայ, թէ հաստ ասուիով
(ապա), իմ բնակարանս թէ շքեղ պալատ
մ'ըլլայ թէ խրճիթ մը, իմ տեղս թէ ընկէ-
րութեան բարձրագոյն կարգերուն մէջ ըլլայ,
թէ ժողովրդեան մէջ աննշան կերպով տալ-
րիմ, հոգ չէ այնչափ. ես իմ երջանկութիւնս
միայն անոր վրայ կը բնուեմ, զոր իմ սիրտս

իրեն սիրելի կընտրէ : Անոր իմ ճակտիս վրայ
դրած մէկ համբոյրը ազամանդեայ թաղէ մ'ա-
ւելի երջանիկ կընէ զես : Քեզ և քեզ խօսքը ,
իր բերնէն ելած՝ ինծի աւելի հաճոյ կըլլայ
քան թէ անձնասիրութեան ամեն երևակայելի
փաղաքշանքը : Աւրեմն դուն ինքզինքիդ հար-
ցուր , քննէ քու էն խորին զգացմունքդ , ու
ըսէ ինծի միմիայն , թէ դուն ինքզինքդ կարող
կզգաս՞ մի յաւիտեան իս չք թողնելու , բոլոր
կենացդ մէջ իս սիրելու , և իմ սիրոյս փո-
խանակ միշտ սէր հատուցանելու . ահա ասոր
վրայ է իմ միակ փառասիրութիւնս , իմ միակ
երջանկութիւնս :

Արդում ըրի իրեն , որ միշտ զինքը պիտի
սիրէի , և միայն զինքը պիտի սիրէի , ու իրմէն
զատվեցայ նէ սիրոս թունտ ելաւ , բայց մեր
զատվելուն իր այնչափ քաջասրտութեամբ հա-
ւանիլը տեսնելով բաւական սփոփեցայ :

Հագիւ 'ի (Թուլօն հասայ) որ նաև առա-
դաստ բացաւ : Մեր ճամբորդութիւնը երկա-
րօտեւ պիտի ըլլար . վասն զի հարաւային բե-
ւեռի կողմերը գիւտեր ընելու կերթայինք :

Միջերկրական ծովը յաջող անցանք , այն-
պէս որ (Թուլօնէն մեկնելնուս ութ օր ետեւ ,
Ճիպրայլարի նեղուցէն գուրս կելնէինք , ու

մեծ Ովկիանի մէջ մեր Թուրքներն առած կեր-
թայինք՝ երբ շողենաւ մը մօտեցաւ մեզի՝ ու
նամակներ տուաւ :

Ենոնց մէջ մէկ մ'ալ ինձի գտնըվեցաւ
Ղիւսիւն : Եւ նամակը տակաւին ամբողջ
մտքիս մէջն է. նամակ մը, կարի բնական պարզ
միանգամայն և կարի սրտաշարժ :

« Իմ ամենասիրելիս, կը գրեք ինձի. կուզեմ
նախ բան մը յայտնել քեզի, գոր չեի համարձա-
կեր խոստովանելու՝ երբ հոս քովս էիր: Եօթ ա-
միսէն մայր պիտի քլամ: Ասի ինձի համար խիստ
մեծ բշտառութիւն մըն է. երբոր սլ չը կրնամ
իմ վիճակս գաղտնի պահել՝ ծնողքս ինձի հետ
գեշ պիտի վարվին՝ ու իս պիտի վնասեն. իմ
հօրեղբայրս կրօնաւորը, որ զիս առարկինի կար-
ծելուն համար կը սիրե՝ ալ չը պիտի ուզէ իս տես-
նել. անարգանքն ու բշտառութիւնը պիտի գան
իս պաշարէն: Բայց անհոգ եղիր. իմ վիճակս
հասկընալէս ՚ի վեր, աշխատութեան մեշ եռան-
դքս եւեցուցի, եւ արդէն տասն հինգ Ֆրանք
վաստրկեցայ: Այսպէս շարունակելով դիւրութեամբ
պիտի կրնամ այնչափ մ'ալ վաստրկիլ՝ տակաւին
հայրս իս չը վնասած. ան ատենն ալ ոսկի խա-
ջըս ու գունաւոր քարս ծախելով՝ կրնամ տան մը

Էրդիբին տակ սենեակ մը վարձել ու ինծի համար մանկաբարձ մը բերել տալ: Անկէ ետեւ, եթէ բարի Աստուած իս շատ երկար ատեն հիւանդ չը թողնէ՝ շուտ մը նորէն աշխատելու կիյնիմ, եւ կրնամ ալ աղէկ իս նայել. վասն զի ես քիչով գոհ կըլլամ: Ամենէն եւել վախցածս սա է, որ չըլլայ թէ իմ բշուառութիւնս իմ մեղքս կարծէն ու ինծի գործ տալ ջուզեն: Սակայն ինչ որ ալ գայ ինծի՝ հոգ մ'ընէր դուն մեր տղուն համար. ճիւնին վրայ ալ պառկիմ նէ՝ այնչափ կը սխմեմ զանի սրտիս վրայ, որ պաղ ջառներս ասկէ գատ, շատ երկար ատեն ալ իմ կուրծքիս մէջէն կը գտնեմ անոր սնունդը: Կարելի եղածին չափ յաճախ նամակ գրէ ինծի. ջանայ ինծի իմացընելու թէ ուր պիտի գտնուիս եօթը ամիսէն ետեւ, որպէս զի քեզի գիտցընեմ թէ մանչ մը ունիմ կամ աղջիկ մը. իրեն ինչ անուն դնելու է նէ ան ալ նշանակես ինծի:

« Խորհէ յաճախ իմ վրայօք. կաղաչեմ զԱստուած, որ քեզ պաշտպանէ. Բիւրամը իս չը մոռնար կոր. ամեն օր իս տեսնելու կուգայ. ու մեկ տեղ էր խաղանք: Խեղճ շուն. մարդ կրնայ ըսել թէ անի կը հասկընայ մեր սէրը ու ինքզինքին պարտք մը կընէ քու հոս չեղած ատենդ գալ ու իս զբօսցընել: Իրեն ցուցի նամակս. կարծես թէ

իս կադաճէր որ իր հաւատարիմ սէրը յայտնէ՞ք
քեզի, Աստուած հետոյ ըլլայ . . . կը նամբուրեն
քեզ հագար անգամ, ու քեզի համար եղած էմ բո-
լորովին սէր:

« ՔՈՒ ԼԻՍԻԼ »

Երբոր այս նամակն ընդունեցի՝ շատ ա-
նարժան էի զանի գրող այն քաղցրաբարոյ
աղջկան . վասն զի գրեթէ բոլորովին մոռցած
էի զանի : Մարդս անբան դարձընող ծովային
կեանքը արդէն իմ էն եռանդուն զգացմունքս
մարած էր : Մակայն, իմանալով որ հայր պե-
տի ըլլայի՝ սիրտս զգալի կերպով շարժեցաւ,
ու միտքս դրի որ նամակ մը գրեմ, ու քիչ մը
ստակ զրկեմ այն չուառ օրիորդին, որ այնչափ
աղնուութեամբ կը պատրաստորվէր իր իմ վրաս
ունեցած սիրոյն թշուառ արդիւնքը տանելու :
Եթէ նոյն վայրկենին կարող ըլլայի զրկելքս
իրեն հասցրնելու՝ հաւանական է որ իմ վեհան-
ճըն խորհուրդս կատարէի . բայց ան ատենէն
շատ ետքը մօտեցանք եզերքի մը . ան ատենն
ալ Լիւսիլ իմ յիշողութենէս անդարձ կեր-
պով հալածված էր :

Դուք, որ ծովու վրայ ճամբորդութիւն ը-
րիք, և ծովականներուն անասնաբարոյ կեանքը
գիտէք, դիւրութեամբ հասկընալու էք իմ

վրաս եղած տարօրինակ փոփոխութիւնները :
Նաւատոտին իր նաւուն վրայ , կը մտնուոյ ամեն
իւր էն սիրելիներն ալ , ծխախոտին բօնձին և
անպարկեշտ երգերուն սիրուն , և յիշաւի՛ ես
ալ հասարակաց օրէնքէն ազատ չը պիտի ըլ-
լայի . ես , որ հայրական խրատներով մեծ յար-
մարութիւն ստացած էի այս նիւթական կեան-
քին :

Ղամբորդութենէս ետև , հրաման առած
դարձայ Պէօլըօնի դղեակը , ու հետս ալ բե-
րած էի , հայրս բաւականէն աւելի զոհացնելու
ինչ որ պէտք էր : Հարիւրապետի աստիճան ա-
ռած էի , և ասկէ զատ , մանաւանդ որ ամենէն
ևեւ իրեն հաճոյ կըլար , իմ գաղափարներուս
մէջ յառաջադիմութիւն տեսաւ : Գրեթէ իրեն
չափ արհամարհանք ունէի թէ զգացմանց մա-
սին և թէ ընկերական օրինաց . ուստի ալ ան-
կէ ետև իս իր արժանի որդին կոչեց :

Հօրս իմ գալստեանս համար տուած տօնա-
խրմբութեանց մէջ բոլորովին սուգած՝ էն քի-
չը երկու ամիսի չափ առանց Վիլսիլի վրայօք
լուր մը հարցընելու անցուցի : Սակայն , օր
մը , երբոր հօրս հետ կը պտրտէի անասնոցին
մէջ , անոր վրայօք խօսելու փափաք մ'եկաւ
ինծի :

— Ի՞նչ եղաւ, ըսի իրեն, այն երիտասարդ աղջիկը, որ երթալէս առաջ կը տեսնէի Սէնդ Բամանտի մէջ :

— Ընաջուց ինչ կրնաս կասկածիլ նէ՞ ան եղած է : Ինծի կուգայ թէ անցածներս ըսին որ տօնավաճառները պտըտող ձեռնածուի մը հետ դնայ :

— Օրս այս պատասխանին վրայ ուրախ եղայ Լիւսիլը մոռնալուս համար, որ այնչափ անարժան եղած էր իմ վեհանձն զգացմանցս, ու ալ անոր վրայօք չը մտածեցի : Սակայն քանի մը շաբաթ հոգքը ես 'ի Պուրժ գտնելով, իրիկուան ժամը տասնին ատենները Պուրպօնօ փողոցէն կանցնէի քանի մը բարեկամներու հետ, երբոր անոնցմէ մէկը ինծի ըսաւ :

« Գալէդ 'ի վեր Լիւսիլիկը տեսա՞ր մի, սա դիմացի տունը կը բնակի :

— Ի՞նչ, պատասխանեցի, ինծի ըսին թէ ձեռնածուի մը հետ հեռուները գացած է :

— Ձեռնածու մը ճանչելը չը գիտեմ, բայց հոս ըլլալը աղէկ գիտեմ. տակէ զատ, կրնաս զիւրութեամբ ստուգել ըսածիս ճշմարտութիւնը :

— Ճշմարիտ ըսեմ, տեսնեմ նէ գէշ չըլլար. գոնէ հետաքրքրութեան համար. գնա տա

սրճարանը նստէ , շուտ մը կուգամ ու ինչ որ
ըլլայ նէ՛ կը պատմեմ քեզի :

Այսպէս խօսելով Թիթեղն (Թէնէքէ) շինո-
ղի մը խանութը մտայ , որ այն տունին մէջն
էր . ինծի ըսաւ Թէ իրաւցրնէ Վիւսիլը հոն կը
բնակէր : Բիւրամ , որ ինծի հետ էր , կարծես
Թէ արդէն կզգար իր հին բարեկամուհին . ու-
րախութենէն կը ցատկըւտէր ու ձիգ և նեղ
սանդուխքն 'ի վեր ինծի առաջնորդ եղաւ .
ցած դռան մը զարկի . բացվեցաւ ու Վիւսի-
լին առջև դուայ ինքզինքս , որ զիս տեսնելով ,
անչափ սաստիկ յուզմունք մը կրեց՝ որ մարե-
ցաւ ընկաւ իմ բազկացս մէջ . փութացի անոր
օգնելու . Բիւրամ անոր ձեռքերը կը լզէր .
շուտ մը խելքը գլուխը եկաւ . բայց սիրտը
դեռ կը նեղվէր . իր կապուտ դէմքը ու բոլոր
մարմինը ջղային ցնցումով մը խուոված էր .
վերջապէս ժպիտ մը եկաւ ձեռքեց անոր շըր-
թունքը ու կրցաւ ինծի խօսիլ :

— Ի՛նչ երջանկութիւն քեզ տեսնել , իմ
ամենասիրելի , պօռուց :

— Աս ալ գոհ եմ քեզի հանդիպած ըլլա-
լուս , պատասխանեցի իրեն :

— Եթէ կարող ըլլայի քեզի ցուցնելու
գոնէ մեր զաւակը , ըսաւ , իմ երջանկութիւնս

ալ աւելի կ'ստարեալ պիտի ըլլար . բայց ձեռքէս առին . հիմայ աղքատանոցն է : Ա՛հ , շատ նեղութիւններ կրեցի քու երթալէդ 'ի վեր ա՛հ իմ բարեկամ . շատ պատմելիքներ ունիմ քեզի :

— Ա՛հ , ա՛հ , մոռնանք անցեալը . երկուքնիս ալ քաղաքակրթութեան մէջ յառաջադիմութիւն ըրինք . իրարու երես տալու բան մը չունինք :

— Ա՛հ , բարեկամ , ինչպէս կը խօսիս հետրս . ինծի համար փոխվեցա՞ր . ես որ քեզի համար այնչափ չարիք կրեցի , և մէկ փայլկեան մ'ալ քեզ չը մոռցայ . . . :

— Մերելիս կաղաչեմ , խաղ ընելու մ'եւըներ :

— Իմ խօսքս դող մը բերաւ Ա իւսիլին վրայ , ու ըւեց . ուզեց դարձեալ իր գորովական զգացմունքն յայտնել ինծի , բայց ես միշտ մի և նոյն անտարբեր ու բիրտ կերպով պատասխանեցի . վասն զի իմ անասնական կողտութիւնս ինծի չէր ներէր ուրիշ կերպով խօսելու . ասկէ զատ համոզված ալ էի , որ Ա իւսիլ ալ արժանի չէր աւելի աղնիւ փարմունքի մը :

Տեսնելով : որ իմ անտարբերութիւնս ու կող-

առութիւնս շինծու չէր՝ Լիւսիլ խորունկ տրրտմութեան մէջ ընկաւ . ես ալ անոր հեծեծանաց աղաղակովք հանգիստ քնացայ :

Հետեւեալ օրը , երբոր արթընցայ՝ պատուհանին քով նստած կաշխատէր :

— Հատ կանուխ ելեր ես , ըսի իրեն :

Ինծի պատասխան չը տուաւ :

Միայն իմ երթալու ատենս , երբոր իրեն մօտեցայ զինքը համբուրելու համար , ու խօսք տուի որ իրիկունը դարձեալ երթամ , ու իրիկունան ուտելիքին զինն ալ վճարեմ՝ աչքերը երեսս դարձուց ու ըսաւ :

— Պարօն , իմ ցաւոցս մէջ երկար ատեն իս մի անարգէք . դուք իս խաբեցիք . խենդ էի որ ձեզի անձնանուէր եղայ . անդարման թշուառութեան մը մէջ նետեցիք իս . պիտի բռնադատեմ ինքզինքս զանի արժանաւոր կերպով տանելու : Երբոր կուզէք՝ դացէք . բայց ալ մի՛ դաք . զի ալ չեմ ուզեր ձեզ տեսնել : Որչափ ձեզ սիրեցի , այնչափ ալ ձեզ կատեմ հիմայ : Չեր անունը ուսուցած էի իմ տղուս՝ պիտի ջանամ զանի մտքէն հանելու . վասն զի ետքը , թէպէտ ողքատ ու հին ու մին լաթերով , բայց դուք իր հայրն ըլլալուն վրայ պիտի ամչնայ : Դացէք , պարօն , դացէք . մեծ

իշխան մըն էք նէ ալ իմ մէկ մագս չէք արժէր» :

Իմ պանդոկս մտած ատեն , ինքիւնեսս կը սէի . անհնար է որ Ղիւսիլի խոժող զէմք մը ցուցնելը սրտանց ըլլայ . վասն զի եթէ Ղիւսիլ , ինչպէս իմ հայրս ու ուրիշները իս հաւատարմացուցին , անկարգ կենցաղ մը վարեց՝ ալ չը կրնար պահանջել որ ես նորէն մեր առջին սիրոյն գորովալից զգացմունքներն ունենամ :

Ըհա այս գաղափարներով իրիկունը ելայ իր տունը գացի , ինչպէս որ իրեն խօսք տուած էի : Մնափառութեամբ է եղեր , նախանձութեամբ է եղեր , վերջապէս դժուար յուղմունք մը զգացի՝ երբ տանը մարդիկը ինծի ըսին թէ Ղիւսիլ իր սենեակը չէ . ասոր համար մինչև հետեւեալ օրը թիթիւ կերպով մը տանջըվեցայ :

Ըուտուն կանուխ գանի տեսնելու գացի՝ դուրս ելած էր . օրհասարակին նորէն գացի , դարձեալ անտեսանելի էր . վերջապէս նորէն գացի , ու թիթիւ ջինողը , որուն միշտ կը դիմէի , ինծի ըսաւ թէ պարապ տեղը նորէն պիտի երթայի գայի , զի Ղիւսիլ գանի աղաչեր էր որ ինծի ներս մտնելու թող չը տայ : Իս անարգ ված կարծեցի , ու գուռողութեամբ մ'ալ գան-

զատեցայ :

— Պարօ՛ն , պօռայ անատենը թիթեղ շինողը , եթէ ձեր ինչ արժէք ունենալը զրուցէի՝ ան ատեն այդչափ ամբարտաւան չը պիտի ըլլայիք . վասն զի ձեր վարմունքը շատ ամօթալի է . երբ դուք կուգաք կոշտութեամբ անագելու այն մանկամարդ աղջիկը , որ դուք ՚ի կորուստ տուաջնորդեցիք ու էն սոսկալի մշտընջենական թշուառութեանց մատնեցիք : Դուրս ելէք խանութէս , ու կ'արդիլեմ ձեզի , ուրիշ անգամ ներս մտնելու չէք :

Նախ՝ ուզեցի որ այս մարդուն վրայ նետ վիմ ու անոր յանդգնութիւնը իրեն սուղի նստեցընեմ . բայց վախցայ որ աստիճանէս կը հան վիմ , ու առանց բան մը զրուցելու առի քալեցի :

Իմ անասնաբարոյ անդգացողութեանս հակառակ՝ Վիւսիլի խստութեանց դիւրագլաց կը գտնէի ինքզինքս :

Ես ալ մէկ սկզբունք մըն է , որ դուք ալ աղէկ դիտնալու էք . մենք՝ կին մը սիրելնիս այն ատեն ճշմարտասպէս կը հասկընանք , երբ որ զմեզ մէկդի կը նետէ :

Տխուր մտածութեանց մէջ բոլորովին կորսրված էի , երբ իմ բարեկամներէս մէկ քանի

հոգի իս աղաչեցին, որ իրենց հետ միանամ
Պուրժը օտար կնոջ մը տեսցընել տալու հա-
մար: Փութանակի ընդունեցի առաջարկու-
թիւննին՝ յուսալով որ այս պտոյտը իմ տըրտ-
մութիւնս կը փարատէր, և հետ զհետէ պտը-
ցանք Մայր—Եկեղեցին, Ժաք—Քէօուի և
Ժան—Քէօուի սլալատները:

Ետքը բաղբէն ելանք ու աղքատանոցը գա-
ցինք, չէնքին դուրսի կողմին վըայ նայուածք
մ'արճըկելէն և աղքատներուն սրանները պտը-
տելէն ետև՝ հասանք այն կողմը ուր կը խնամ-
վին գործում—ողայր: Չը կրնամ ձեզի բացատ-
րել ի՛նչ խորին յուզմունք կրեցի հոն մտած
ատենս: Ես հոն եկած էի առանց խորհելու և
բոլորովին ուրիշ բանի համար: Բայց յան-
կարծ կը յիշեմ, որ այս թողված փոքրիկ թըշ-
ուառ էակներուն մէկն ալ իմս էր. ապահով
եղիք որ ասի իս ճնշող սոսկալի հարուած
մ'եղաւ ինծի համար: Ա՛հ, ո՛րչափ երջանիկ
պիտի ըլլայի եթէ կրնայի ճանչել իմ որդիս.
ինչպէ՛ս կը քննէի բոլոր այս տղոցը դիմաց գը-
ծագրութիւնը, զանոնք Վիւսիլին դիմացն ու ի-
մինս հետ բաղբատելով, ո՛րչափ խուռված էի,
գիտնալով որ բուն իմ զաւակս, ինծի պէս հը-
պարտ իշխանի մը զաւակը հոն էր՝ ու գթու-

Թեամբ կը սնէր... :

Այս դասը, զոր նախախնամութիւնը ինք
զոզցես ինծի կը մատակարարէր՝ մեր էն մեծ բա-
րոյականի մատենագրաց հարիւր օրինակ դիւ-
քին ընթերցանութենէն աւելի մեծ ազդեցու-
թիւն ըրաւ իմ վրաս : Ան աղէկ ուսնելիքնե-
րը ընկերութեան և բնութեան ուսնելիքներն
են : Միտոս այնչափ տակն ու վրայ եղած էր,
որ տուն մտած ստեղծ, էե առջի գաղափարս
եղաւ Ալիսիին նամակ մը գրել ու հրաւիրել
զանի, որ տղան աղքատանոցէն հանէ . խօսք
տալով իրեն, որ զանի ըստ արժանւոյն մեծը-
նելու պէտք եղածը հոգամ . բայց պատասխան
մը չընդունեցի . անկէ ետքն ալ շատ նամակ-
ներ գրեցի՝ ամենքն ալ նոյն վիճակն ունեցան :

Ալիսիին անողորբութիւնը զիս երթալով կը
բորբոքէր՝ երբ մայրս, որ ինծի հետ 'ի Պուրժ
կը դռնըվէր՝ ի՛նչ 'ի Պեօւրօն տարաւ :



Իմ հայրս այնչափ աղէկ գիտէր իմ վրաս
իշխել ու այնչափ իրարմէ տարբեր զգօսանք-
ներ կը գտնէր ինծի, որ դարձեալ մուցած
էի Ալիսիին ու անոր տղան՝ երբոր օր մը եր-
կար ու հապնեցընող որսէ մ'ետեւ, բանի մը

գործաւորներու ու զղեակին սպասաւորներուն մօտը , կաշնիի մը ետեւ հանգչած ատենս , ըսկըսան շուտ մը Վիւսիլէն հետ իմ յարաբերութեանց վրայօք խօսիլ :

— Չը գիտեմ , ըսաւ մէկը , թէ մեր երիտասարդ տէրը իր Աէնթ—Մամնտի սիրուհին տեսա՞ւ զայէն 'ի վեր . . . — չը գիտեմ , պատասխանեց միւսը , բայց եթէ զանի մտնայ՝ շատ կարծր սիրտ մ'ունեցած ըլլալու է :

— Այստուժի՛ն մը կըլլայ , կըկնեց առջինը . թշուա՛ռ օրիորդ . անոր համար այնչափ Նեղուժիւն կրեց . կ'ըսեն թէ իր ընտանիքը զինքը չարչարելէն ու երեսի վրայ թողնելէն ետեւ , թուբի մ'ետեւ ծնաւ իր որդին , անօգնական և անխնամ՝ արիութեամբ համբերելով անօթուժեան և այն ցաւերուն սր կը ձնշեն , սովորաբար կիները այն սոսկալի վիճակին մէջ : Արիւ ձմեռն ալ , ամեն մարդ կը տեսնէր զանի , որ կիսամերկ կը թափառէր ձիւնին մէջ , ու կը մուրար իր տղան ալ մեծ խնամքով պատրասարելով իր կուրծքին վրայ : Ա՛հ , տեսնողին աղիքները կը կտրտէր :

— Ա՛հ : զղեակն եկած օրն ալ , ո՞վ զանի տեսներ նէ սիրտը չէր խշխշար : Ռուսի մը ալ կանջները սառեցնելու չափ ցուրտ էր ան օրը .

ես անգամ, որ բակը կայնէր փայտ կը կոտորէի՝
պարասպ տեղը կ'աշխատէի ցուրտին յաղթե-
լու . ձեռքերս, որ հին կաղնիի մը կեղևին
չափ փապարեալ (նասըրը) են, կ'ընդարմա-
նային (ույուշմագ) : Աւտի ապուշ կըթեցայ,
երբ տեսայ որ այն սառուցանող ցուրտը բա-
նի տեղ չէր դնէր, ինք որ այնչափ քնքուշ էր
ու այնչափ նուրբ հագած : Երբ որ եկաւ ին-
ծի աղաչեց որ զինքը կոմսին տանիմ, շըթուն-
քը կապուտակ էին, աչքերն ալ նսեմացած .
քիչ մնաց որ իս տղու մը պէս լացընէր պիտի :
Չանի դիտելով ինքնիրենս կըսէի . այս այս-
չափ տկար մարմինին մէջ շատ պօրաւոր հոգի
մ'ըլլալու է, որ ցուրտը զանի գետինը չը զար-
նէ :

— Ե, յո՛, էյ . մեր ծեր կոմսին զանի ինչ
պէս ընդունենն ալ տեսար ա՛ . ձեռքէն զար-
նէ՛ Բիւրամին փարատել պիտի տար զանի .
բայց որչափ զանի զրգըուեց նէ ալ բարի շու-
նը անոր իր գգուանքը ընծայեց՝ կարծես թէ
կը հասկընար անոր թշուառութիւնը :

— Հարուստները մեր սրտին նիւթէն տարբեր
նիւթէ մը շինված սիրտ ունեցած ըլլալու են,
վասն զի, վերջապէս, եթէ այն երիտասարդ
աղջիկը թշուառ է նէ՛ չէ՞ մի որ մեր երիտա-

սարդ տէրն է պատճառը . և անոր տղան ալ պէտք չէր որ գոնէ՛ կոմսին զթուլթիւնը արթնցընէր . այն անմեղին երազներուն մէջ չէ՞ մի որ իր արիւնը կար : Եսկէ զատ , այս դրժբադդ օրիորդը ամեն կերպով զթուլթեան արժանի է : Ա՛րսեն թէ շատ անգամ հարուստ մարդիկ գտած է , որ իր գեղեցկութեան համար , կ'ուզէին իրեն օգնութիւն ընել , և ինքը միշտ նախամեծար սեպեց խեղճ ըլլալ ու Ենտօնին հաւատարիմ մնալ , զոր կըսիրէ մինչև պաշտելու կերպով : Աերևայ որ շատ անգամ վրայ հասնելով տեսած են , որ իր տղան գգուելով երիտասարդ կոմսին անունը կուտար անոր , սիրոյ այնպիսի այլայլութեամբ և այնպիսի ձայնական շեշտերով , որուն նմանը երբէք տեսնելած չէ . . . :

— Ղշմարիտ որ , եթէ զանի երեսի վրայ թողնէ՛ անարժան գործ մ'ըրած պիտի ըլլայ

Եւ բուռական խօսք իմացած էի համոզվելու համար , որ իմ հայրս իս անվայել կերպով խաբած էր ու խորին զղջում մը սկսաւ ծնանիլ սրտիս մէջ , գգուշութեամբ սպրդեցայ անցայ ծառերուն ետեւէն , որպէս զի գործաւորները չը գիտնան թէ ես զանոնք մտիկ ըրած

էի և զղեակը գացի՝ ուրկէ շուտ մը վազեցի ՚ի Սէնթ-Էմանտ, Վիսիլը տեսնելու և զանի այնչափ կոշտութեամբ անարգելուս համար թողութիւն խնդրելու նստասկով : Բայց այն վայրկենին, որ ես շքեղ կերպով քաղբին հարաւային կողմէն ներս կը մտնէի ձիով՝ փոշիով ծածկըված տորպակը կռնակը՝ քայլելով կուգար գործաւոր մը քաղբին հիւսիսային կողմէն : Երբոր մայրերը կը փախցընէին տղայքը իմ առջևէս, ու, « եկէ՛ք, տղայք, եկէ՛ք, աս անօրէնը ձեզ հիմայ ձմիլէլ կուտայ » կը պռուային՝ բոլոր անցորդները ու բոլոր բնակիչները, որ դուռերնին կայնած էին՝ այս գործաւորը կը բարէին՝ պօռալով « Պաբրիէ՛լ, խեղճ Պաբրիէ՛լ » : Իրաւցընէ՛ ան էր, որ չորս տարու բացակայութենէ ետև իր ծննդեան քաղաքը կը մտնէր նորէն :

« Ո՛հ, պարօն, ըսաւ ինծի հետևեալ օրը ատաղձագործին զրացնուհիներէն մէկը . երբէք տեսնված չէր անանկ սրտաշարժ տեսարան մը, որ տեսնըվեցաւ երիտասարդ գործաւորին Վիսիլի տունը մտած ատեն . . . Վիսիլ զանի տեսած ատենը սպառնացող ուրուականի մ'առջևը ըլլալու պէս ետ ետ քաշվեցաւ . իսկ ինք՝ համարձակ ու հանդարտ գէմքով անօր ետևէն

զնայ մինչև որահին խորը ուր Վիւսիլ բազկա-
ւոր աթուռի մը վրայ նստած էր . հոն անոր
ձեռքը բռնեց ու սկսաւ անոր երեսն 'ի վեր
նայելու : Արկուքն ալ վայրկեան մը լուռ կե-
ցան . ետքը Վիւսիլ պօռաց . “ դուրս ելէք ,
ինծի դպչիք նէ՛ կարատաւորէք ինքզինքնիդ ” :

— Ա՛յ , ո՛չ , պատասխանեց Գաբրիէլ :

— Գեռ չը գրտէք ուրեմն իմ յանցանքս ,
իմ մեղքս :

— Ի՛մն բան գիտեմ . բայց գիտեմ նաև ,
որ ատենէ մ'ի վեր կը հառաջէք իս մեղքընա-
նալով և կարեւր է վրաս ալ ցաւելով :

— Ուրեմն դուք անշուշտ կուգաք ձեր քա-
րը նետելու , ձեր վրէժը առնելու :

— Կուգամ անուն մը տալու քու զաւկիդ .
կուգամ ամուսնանալու իմ յանցաւոր նշանածիս
հետ . յանցաւոր բայց զղջացող ” : Այս վերջին
բառերն արտասանած ատեն , Գաբրիէլ Վիւ-
սիլին ոտքերուն առջև ծունկի վրայ եկաւ .
նոյն վայրկեանին Այմօն հայրն ալ վրայ եկաւ ,
մենք ալ բոլոր դրացիներս , բազմութեամբ
ներս մտանք , և ան ատեն ուրախութեան հա-
զար աղաղակ բրթաւ . ամեն մարդ Գաբրիէլն
ու Վիւսիլը կը գրկէր . և չը գիտեմ թէ ին-
չու համար ամենքնիս ալ ինքզինքնիս մտի-

Թարված կը զտնէինք , ինչպէս որ տաք և փոթորկաւոր օրէ մ'ետե իրիկուան զովութիւնը կը շնչըվի :

Վասն զի , կը տեսնէ՞ք , պարօն կոմս , մենք ամենքնիս ալ , որ այս տղոց ծնանիլը տեսանք՝ երկար ատենէ 'ի վեր սովրած էինք հաւտալու թէ այս երկուքը իրարու համար ստեղծված են և անոնց զատվիլը մեզի համար մեզ տանջող երազ մըն էր : Մէկ կողմէն ալ , սովրած էինք նաև Ղիւսիլը սրբութեան հրեշտակ մը ճանչելու և մեզի համար շատ մեծ ցաւ մըն էր զանի այնպէս անպատիւ եղած տեսնելը ; աւանց նախատեսելու թէ ո՛վ պիտի դար իր յանցանքին մէջ անոր թե էն բռնել վեր առնելու : Ես ասոնք կըսեմ ձեզի իմացընելու համար մեր սփոփանքը , որ ունեցանք Քաբրիէլին դարձովը :

— Եւ դ տեսարանին ատենը իմ վրայօք կը մտածէի՞ք մի :

— Եստուած իմ , Պարօն կոմս , կեցէք . . . այո՛ , կը մտածէի քիչ մը ձեր վրայօք . բայց տարտամ կերպով . և չէ թէ քու արէկութեանդ համար , պատասխանեց ինծի՝ միամտութեամբ ժողովրդեան բարի կիներ :

— Ի՛յ , անմիջապէս ալ ամուսնանալու

վրայ են մի :

— Կարելի եղածին չափ շուտ . արդէն եկեղեցիին ու քաղաքապետին արձանագրութեանց մէջ անցած լմնցած է :

Եյս կնոջ պատմութիւնը ոչինչ բան մըն է բոլոր քաղաքին մէջ խօսվածներուն քով . վասն զի ամենքն ալ այս ամուսնութեան վրայ կը խօսէին , գովելով Գաբրիէլը ու ինծի ալ ինծի արժանի եղածները զրուցելով :

Ենկարելի կըլլայ ինծի՝ ձեզի բացատրել այս անակընկալ դիպուածին իմ վրաս ըրած ազգեցութիւնը . . . ուրեմն Նիւսիլ յաւիտեան կորուսված էր ինծի համար . . . Եյս գաղաքարը իս բոլորովին խուովեց . — եռսունէն աւելի նամակ գրեցի իրեն , ամեն բան կը նուիրէի այլ ծաղկահասակ աղջկան . մինչև անգամ զինքը կին առնել կը խոստանայի . ամենեկին ինծի պատասխան մը չը տուաւ : Ալ չէի բընանար . խենդի պէս Թափառական կը պտըտէի դաշտերուն մէջ : Ա՛հ , վստահ եղիք , որ երեսիս տալու բոլոր մեղքերուս ապաշխարանքը կը քաշէի սոսկալի կերպով : Բոլոր իմ խոստմունքիս դէմ՝ ամուսնութեան սովորութիւնները կը կատարվէին արագութեամբ և շուտ մը հասաւ այն արարողութեան համար

որոշված օրին առջի իրիկուներ : Մեծ կիրա-
կիին էր , զիմակաւոր կաքաւ կար : Յուսարով
որ հոն Ղիւսիլը կրնամ գտնել ու զիմակին
ներքեւէն կրնամ անոր հետ խօսիլ՝ հոն դացի :

Պարահանդէսը Թատրոնին սալայատակին
վրայ պիտի ըլլար , էն առաջ հոն դացողնե-
րէն մէկը ես եղայ . և քանի որ զիմակաւոր-
ներ ներս կը մտնէին՝ կը փութայի անոնց ով
ըլլալը հարցընելու ու քննելու . բայց ախո՛ս .
կէս զիշեր եղաւ և զիւ իմ փնտուածս գտած
չէի : Բոլորովին վհատած՝ սրահին մէկ ան-
կիւնը քաշված էի ու հոն լուս կեցած էի ,
երբոր զիմակաւոր մը էն կայտաւը , ինչպէս
որ երևցաւ ինծի , էն զուարթը և բոլոր հոն
եղողներէն էն աղւոր հազվողը մօտեցաւ ինծի
յանկարծ ու ըսաւ : « Տրտում ես ; զեղեցիկ
զիմակ , կուզե՞ս որ քեզ ուրախացնեմ . — Թե
որ կրնաս , կուզեմ , պատասխանեցի . — էհ ,
ուրեմն ետեւէս եկուր : Ըն ատեն այս զիմա-
կաւոր խալըլիկը բազմութիւնը ճեղքեց , մէկ
յատկելով մ'անցաւ վեց ոտքէն սանդուխք մը
ու ըմպարանը մտաւ , ես ալ հետը : Հոն ար-
դէն պատրաստ էր շիշ մը Շամբանիա և եր-
կու բաժակ . — զուն մեծ բաներ կրնես , ըսի
իրեն . — բայց քեզի պէս իշխանի մը հետ առ-

կէ վար բանով մը վարվիլ չը կրնար ըլլալ, մանաւանդ երբոր զանի ուրախացնել ուզվի : (Մն (հայտէ) կենացդ, կամ մանաւանդ քու ունեցած սէրերուդ աղնուական կոմս Պեօլ, րօնի . . .

Թող անանկ ըլլայ, պատասխանեցի, ու մեր երկու բաժակներն իրարու զարկինք ու մեր գինին խմեցինք երկայն ու նեղ գաւաթներէն :

Գեղեցիկ դիմակ, ըսի դարձեալ, որովհետեւ դուն իս այդչափ աղէկ կը ճանչես, հրաման կուտամ ինձի, որ քու գեղեցիկ ձեռքերէդ մէկուն ձեռնոցը հանեմ :

— Գիմակս անգամ վերցնեմ, եթէ կը փափաքիս, Տէր կոմս, բայց իրաւ որ շատ անօգուտ պիտի ըլլայ. վասն զի դուն երբէք իս տեսած չես, լէ՛ք որ Սէն—Ժէռմէնի արուարձանն տեսած չես նէ :

— Ո՛հ, ո՛հ, դուն Բարիզի կըլլասկոր. ամեն ըսածներուդ պիտի հաւտամ. որովհետեւ դուն ամեն բան ստուգելու ազատութիւն կը շնորհես՝ վերցուր ուրեմն դիմակդ, գեղեցիկ անձանօթ :

— Ո՛չ, հոս չէ՛, կը վախնամ մեր բոլորտիքն եղող անձերէն, նախ, քատուիլ մը պա-

րենք, ետքը կերթանք հրապարակին ծառե-
րուն ներքև ճեմելու (պըսըտելու) հոն աւելի
ազատաբար կը խօսինք, ու դուն ուղածիդ պէս
իս կը տեսնես :

— Հատ աղէկ, պատասխանեցի :

Կուղածութիւնները ներդաշնակութիւնը
սկսած էին՝ նետվեցանք տարին մէջ, ու ուրա-
խութեան քանի մը նշոյլներ թափանցեցին իմ
տրտմած հոգուս մէջ. վասն զի աս անծանօթը
իմ հոգուս վրայ անմեկնելի ազդեցութիւն մը
կը բանեցնէր: Յիրաւի, ես տակաւին անոր
դէմքը տեսած չունէի, բայց իր անձը շատ
շնորհալի էր. իր թեթեւաշարժ ու բարձր հա-
սակը կը նկարագրելէր սե տաւիշէ հրեայ* ներ-
քեէն: Իր ձերմակ վտաւակը (իչ Ֆիս-
տանը կամ միսօ) կարճ ըլլալով, դիւրին էր
հասկընալ իր մարմնոյն ձեւին կատարելու
թիւնը: Ղշմարիտը ըսելով ասի պարահան-
դէսին թագուհին էր...

Իայց ո՞վ էր... շատ ուշ կը մնայի կոր
զանի գիտնալու. ուստի փութացի զանի հրա-
պարակին ծառերուն ներքև քաշելու. ուր
խօսք տուած էր իր անունն ինծի յայտնելու:

Հազիւ պարահանդէսէն դուրս ելած էինք

*Տեսակ մը կնկան վերարկո՞ւ որ սքանսէր կըսվի:

որ աղաչեցի զինքը դիմակը վար առնելու :

— Դեռ ո՛չ, պատասխանեց, այսպէս պահ-
ված կերպով խօսելը գեղեցիկ կուզայ կոր ին-
ծի . խօսք տուի որ դուն իս ճանչես պիտի ,
խօսքս կը բռնեմ . բայց առ այժմ, Տէ՛ր կոմս,
ըսէ ինծի ինչո՞ւ եկար այս արուեստաւորնե-
րու պարահանդէսին : Անտարակոյս ժողովուր-
դին միամիտ և փափուկ աղջկան մէկը պատ-
րելու : Գիտեմ որ դուն հրապուրող մըն ես
ու մեծ կոտորած կընես ստորին կարգի ժողո-
վուրդին գեղեցիկ մանկամարդներուն մէջ :

— Գեղեցիկ անծանօթ , ներէ , որ եթէ
զիս կանարգես չըսեմ նէ ալ՝ գոնէ քեզ աղա-
չեմ որ գիտնաս թէ դուն իմ բնութեանս վրայ
կը խաբվես :

— Իրա՞ն կըսես . ի՞նչ, դուն ինծի անմե-
ղութի՞նն ծախել կուզես , ինծի պէս լատին
թաղէն եղող Բարիզցի կնոջ մը : Ատանկով
դուն աղւոր սուտ մ'ալ զրուցած կըլլաս . իբր
թէ ես բու արկածներն գիտցած չըլլայի : Գե-
ղեցիկ Վիսիլին հետ բու սէրդ կը հաստատէ,
ինչպէս կերևայ ինծի , որ դուն չես արհա-
մարհեր բանւոր գեղեցիկ աղջիկները :

— Բայց շնորհալի անծանօթ , որովհետեւ
այդչափ աղէկ կը ճանչես իմ դաղտնիքս՝ գիտ-

Նալու ես, որ Ղիւսիլին հետ իմ յարաբերու-
թիւններս քու հասկըցընել ուզած կերպով
չէ:

— Ի՛նչ. զանի տղայ գտար, անոր վստա-
հութիւնը վաստըկեցար, զանի հրապուրեցիր.
քանի մը ամիս ետքը զանի կը թողնես զաւկով
մը. ու կըյնի էն սոսկալի խեղճութեան մէջ.
քու սիրուդ վրայ վստահ ըլլալով՝ դիւցազնա-
կան արիութեամբ մը ոչինչ կը համարէ երեք
տարի բոլոր նեղութիւնները ու էն աւելի ճըն-
շող զրկումներուն համբերելով կը մեծցընէ
քու տղադ. դարձած ատենդ, անոր կը հան-
դըպիս, կուրանաս անոր նեղութիւններն ու
հաւատարմութիւնը. ու անոր հետ կը վարվիս
բիր բողի մը հետ: Եսի լատին թաղին մէջ
վարվելու կերպէն տարբերութիւն ունի՞ մի:
Դուն ինձի հաւտացընել կուզես որ դուն Ղիւ-
սիլին համար անկեղծ դիտաւորութիւններ ու-
նէիր... Գնա՛, գնա՛, գեղեցիկ կոմս, դուն
մեծ իշխան մըն ես, ու ըստ այնմ կեանք կան-
ցընես. խոստովանէ:

— Խոստովանելիքս սա է որ դուն անանկ
նիւթի մը կը դպչիս, որուն ես շատ դիւրազ-
գաց եմ, և ով ալ ըլլաս դուն՝ կը հասկընամ
որ պէտք է քեզի անկեղծաբար խոստովանիմ

իմ զգացմունքս Վիւսիլին համար :

— Այդ խոստովանութիւնը ինձի մեծ շահ մը չունի նի; ալ՝ պատմեցէք, պատրաստ եմ բոլ ուխտերուդ իրաւունք տալու :

— Ա՛հ, գեղեցիկ դիմակ, աւասիկ ճշմարտութիւնը :

Արդարև հրապուրեցի Վիւսիլը . բայց ան ատեն շատ կը սիրէի զանի... ո՛հ, երդում կընեմ քեզի . իմ սէրս այնչափ խորունկ ու անկեղծ էր, որ իմ անկէ յափշտակած պատուոյն կը հաւասարէր գոզցես . վասն զի անոր հետ ամուսնանալու վրայ կը մտածէի :

Ատենէ մ'ետև, եթէ զանի թողի՝ պարագայներն են, որ զիս բռնադատեցին . և իրաւցընէ, շատ ցաւով մեկնեցայ : Ճշմարիտ է, որ իմ գալէս ետև ալ, երբ զանի վերստին տեսայ՝ ի Պուրժ՝ շատ կոպտութիւն ու շատ ապերախտութիւն ըրի իրեն դէմ : Բայց զբը պարտութեան ազդեցութեամբը կը գործէի . կը կարծէի թէ իմ սիրուս անարժան եղած էր :

Ամենը ամիս մըն է, որ զիտցայ թէ ընդհակառակն, հաստատութեան ու արիութեան էն վերին աստիճանը հասած էր : Այն ատեն իրեն դարձայ՝ սիրտս առջին սիրովս լըցուն : Արջանկութեան ծայրն հասած պիտի

լլայի , եթէ հաճէր իմ յանցանքս մոռնալու :
Դայց մերժեց ամեն ազաջանք . անողոքելի ե-
ղաւ . իս սպաննել ուզեց : Վաղը կամուսնա-
նայ . կամ խենդենամ պիտի կամ մեռնիմ ,
վասն զինկարելի է , որ միտքս բերեմ թէ յա-
ւիտեան զատված պիտի մնամ անկէ : Ո՛հ ,
Մատուած իմ , եթէ գոնէ կարող ըլլար մի-
միայն գիտնալու որչափ կը տազնապիմ ար-
գէն . բայց մէկ տեսութիւն մ'անգամ ընել
չք կրցայ ընդունիլ իրմէ : Եյս պարահանդէ-
սին եկայ զանի գտնելու յուսով . ասի իմ յու-
սոյս վերջին ժամն էր , և ահա պարապը ան-
ցած :

Եթէ տակաւին անգամ մ'ալ խօսելու կա-
րող ըլլայի՝ պիտի ծնրադրէի իր ոտքերուն
առջև , և իրեն այնչափ աղէկ պիտի ըսէի թէ
զինքը կը սիրեմ . . . թէ զինքը կը սիրեմ ամեն
ատենէն և եւ , որ ինք ալ պիտի տար ինձի իր
սէրը և իր վստահութիւնը : Բայց գիշերը
կանցնի , քանի մը ժամէն անի յաւիտենական
կերպով պիտի միաւորի ուրիշի մը , ու պիտի
մնամ ապագայի մ'առջև , որ զիս կը գողա-
ցընէ : Ո՛հ , Ղեւսի՛ւ , Ղեւսի՛ւ . ինչո՞ւ համար
չողորմեցար ինձի : Կը գողա՛ս , գեղեցիկ ան-
ծանօթ , իմ խօսքերուս վրանքը քեզ կը սոս-

կայրնէ : Եւաղ ատի ի՛նչ պիտի ըլլար , եթէ սրտիս խորը տեսներու կարող ըլլայիր . բեզի զըուցածներս իմ զգացմունքէս ու իմ վիշտերէս շատ տկար է :

— Յիրաւի , պատասխանեց անծանօթը դողդոջուն ձայնով մը . քու ցաւերդ իս տրտմեցուց . և կը ցաւիմ քու վրայ : Չէի հատար որ քու սէրդ այդչափ սաստիկ և այդչափ անկեղծ ըլլար : Կը ցաւիմ այն օտար ազդեցութեանց վրայ , որ բեզի կոբսընցընել տուին Ղիսիլին սէրը , և որովհետև զիպուածը ուզեց որ ես քու ցաւերուդ խորհրդակից ըլլամ , խօսք կուտամ բեզի , անոնք քու սիրուհիդ հաղորդելու , և համոզված եմ , որ բեզի պիտի ներէ :

— Բայց շատ ուշ պիտի ըլլայ ատի :

— Մի խաբւիր . եթէ Ղիսիլ քու խղճիդ այդ խայթոցները ճանչէ՛ , քու իրեն ըրած գէշութիւնդ կը մոռնայ . բայց ալ բեզի չը տար իր վստահութիւնը . վասն զի ուրիշ անգամ դուն անոր ըսած էիր , որ բնաւ մէկ բան մը չը պիտի կրնար քու սէրդ տկարացընել . և սակայն , առանց ստոյգ տեղեկութիւններ առնելու աշխատելուդ , զանի անարդեցիր ու գէշ վարվեցար անոր հետ : Ո՞վ կրնար իրեն պա-

տասխանատու ըլլալ, որ քու այդ նոր խոստովանութենէդ ետե, ետքերը ուրիշ թշնամանք չք բերես պիտի իրեն. դուն աղէկ կը հասկընաս, կոմս, որ իրեն ալ անկարելի էր քովը վրադ վստահիլ: Ուրեմն հիմայ, մտածէ թէ դուն ի՞նչ վիճակի տիրացար՝ այդչափ դիւրութեամբ զըպարտութեանց հաւտալուդ: Լիւսիլ քեզի համար յաւիտեան կորսըված է: Եւտ՛ղ, կաղաչեմ զքեզ, խնայէ ինձի. մահառիթ յուսահատութեան մը մէջ կը ձգես իս: — Հանդարտէ, կոմս. դուն մարդ ես. դուն ցաւերուն դէմ դիմացկուն ըլլալու ես: Ես կապահովցրնեմ քեզ, որ Լիւսիլ կաղաչէ զՆստուած որ քեզ սփոփէ: — Հիմայ, եթէ տակաւին իս ճանչել և ինձի հետ աւելի երկարատեն խօսիլ կուզես, հոս մօտերս բարեկամուհիի մը տուն կայ, եկուր հոն երթանք. վասն զի հագուստս թեթե է, ու կը մսիմ կոր:

Ը

Ընծանօթին փափաքանաց համեմատ, թողուցինք հրապարակը ուր կը ճեմէինք, ու շուտ մը Տիկին Ռօպէրին տունը հասանք: Եսի պառաւ կին մըն էր, սիբիլլայի մը նման

որ սիրոյ նենգութեանց առաջնորդն ըլլալ կը սիրէր . ասկէ զատ խելացի ալ էր և իր սովորական զբաղմունքներն տեսնողը զանի շատ բարեբարոյ կը կարծէր : Սենեակէն ներս մը տանք նէ՛ փիլիսոփայաբար Եռնկի գիշերները կը կարդար խիստ հրահրած կրակի մը առջև :

— Եղէկ գիտէի պուշաց , որ դիմակաւոր պարահանդէսէ մը ինծի բաժին մը պիտի դարձնէր : Ե՛հա գեղեցիկ զոյգ մը . . . Եւ ոտքի վրայ ելնելով , մեզ կը բննէր , երբոր իմ ընկերուհիս զանի սրահին մէկ անկիւնը քաշեց ու մտերմաբար խօսեցաւ անոր հետ :

Ե.յս խօսակցութեան ատեն , դիտեցի , որ պառակին դէմքը , տարօրինակ կերպով մը կը ծանրանար : Եւ ըստ մը իր սովորական դէմքը առաւ , և անծանօթին ձեռքէն բռնելով , մեր ձակայ սենեակ մը մտցուց զանի՛ ըսելով :

— Ետի ամենեին դժուարութիւն մը չունի ձեր տունն ըլլալու պէս ազատ եղէք . բայց փութացէք . վասն զի կը կարծեմ թէ մեր գեղեցիկ երիտասարդը ձեր ուշանալուն շատ անհամբեր պիտի ըլլայ :

Ե.յս վայրկեանին ընկերուհիս աներկութեացաւ . շուտ մը Տիկին Ռօպէա իս իր քովը նստեցուց կրակին մօտ :

— Ով ալ ըլլաք, գեղեցիկ դիմակ, ըսաւ ինծի, ներեցէք ինծի յայտնելու ձեզի իմ տանս մէջ տեսնելուս համար զգացած ուրախութիւնըս : Դուք ինծի էն վերին կարգէ ազնուական մը կերեաք, և ասկէ զատ դուք ձեր դարձուածքին մէջ բան մը ունիք, որ ինծի կը յիշեցընէ երիտասարդ իշխան մը . Պեօւրօն կոմսը ըսել կուզեմ, անտարակոյս դուք կը ճանչէք զանի . և կարելի է ձեր բարեկամներէն մէկն ալ է :

— Իրաւ, պատասխանեցի ձայնս փոխելով, կը ճանչեմ Պեօւրօնի կոմսը :

— Հա՞, է՛հ, իրաւցընէ զուարճութիւնս իրող ազնուական մը չէ՞ մի . . . : Բայց հիմայ տա նայինք, որ կարծեմ վաղն է որ Վիւսիլիկը կարգը վի պիտի :

— Այո՛, ինծի ալ կուգայ կոր որ անանկ ընցի :

— Չեմ կարծեր որ կոմսին հողը ըլլայ այս հարսնիքը . իր հաճոյքը կատարեց աս աղջկան վրայ, ալ հիմա զանի ինչ ընելիքը ինքաւ չը գիտէր :

— Ընդհակառակն կը պատմեն թէ այս հարսնիքը զանի խոր տրումութեան ու ցաւի մէջ կը ձգէ :

— ԸՆ, ծիծաղաշարժ բան մըն է ատ ըսածդ : Պահ, Լիւսիլ արժանի է ով որ ըլլայ՝ անոր սիրտը վաստկելու . ասկէ զատ տղայ մ'արունեցած է կոմսէն . սիրուն տղայ մը, զոր շատ կը սիրեմ . չը գիտեմ թէ դուք զանի կը ճանչէ՞ք մի . բայց շատ սիրուն է, կոմսին պատկերը ունի : Ըստ անգամ զանի կը կանչէի իմ պատուհանիս առջև, ու շաքարեղէններով կը խղզէի զինքը : Ուստի, վստահ եղիք, որ շատ սաստիկ ցաւ մը գգացի, երբոր պայծառ օր մը Պուրժէն դարձած ատենս, տեսայ որ գնչուղի (չինկէնէ) պէս կին մը զանի կողովի մը մէջ դրեր անկէլանոց կը տանէր :

Ճնշող տաք մը կընէր այն օրը, իր խեղճուկ երեսը արևէն կերէր կոր : Երբ որ իստեսաւ՝ թւերը լալով դէպ ինձի երկնցուց . բայց անկարելի եղաւ կառքը կայնեցնել տալը : Հեռուէն կը տեսնէի, որ զանի տանող անարժան կինը զանի կը չարչարէր՝ պուլալով իր ձեռքերը ինձի երկնցընելուն համար, իբր իմ պաշտպանութիւնս խնդրելով : Են ատենը ինքիրենս կըսէի . եթէ կոմսը իր տղան այս վիճակին մէջ տեսնէր՝ իր հպարտութիւնը սաստիկ տանջըվէր պիտի :

Վերջապէս զանի անկէլանոցէն հանեցին :

Վաղը , Վիւսիւ կարգված ատենը , հայր մը պիտի տայ անոր , ու ետքէն կոմսը կարելի է հաւաքէ պիտի զանի այնպէս Թողելուն համար . . . քայց ի՞նչ կրնէ ընկերուհիդ . ի՞նչու չերևար . մէյ մը սա մտած սենեակը երթամ . ա՛յ , հոն չէ . մեզի խա՞ղ մը ըրաւ . . . նամակ մը ձգեր է հոս . ձեզի համար պիտի ըլլայ . քայց չէ , Պետրօնի կոմսին ուղղված է . . . զուք ասի կրնաք անոր տալ . . . :

Նամակը ձեռքս առի , Վիւսիլին գիրն ըլլալը ճանչեցի ու սիրտս տակն ու վրայ եղաւ . վասն զի շուտ մը հասկըցայ , որ սարսափելի կերպով մը ծաղը եղած էի : Երեկոյթն ամբողջ անոր հետ անցուցած էի , ու չէի ճանչէր զինքը : Ի՞նչ Թշուառութիւն . կախարդ պառաւր , որ յայտնի եղաւ թէ Վիւսիլին հետ խօսք մէկ ըրած էր զանի փախցընելու , նորէն սկըսաւ իր խաղը խաղալ , կեղծելով թէ ինքն ալ խաբված էր :

Ուզեցի , որ ճշակաստոր հանեմ աս կնիկը . քայց ինքզինքս բռնեցի . ու հոգին սատանային յանձնելով զուրս ելայ քովէն :

Տիկին Ռօպէւին տունէն , շտակ մեր տունը գացի , սենեակս մտայ ու հոն անկողինիս վրայ ընկայ . յուսալով որ քունը իմ խւովու-

Թիւնս կը հանդարտեցնէ . բայց բոլոր գիշերը սոսկալի ճնշող ճիւղազի մը որսն եղայ . իմ երազներս ահուելի ողբերգութեանց շարք մը եղան , որ հողիս չարչարեցին : Ուստի երբոր արթնցայ , գլուխս ծանրցեր , կուրծքս ներս փախեր էր , ու կը խղզվէի կոր : Պատուհանը բացի որ քիչ մը շունչ առնեմ . բայց սրտիս խոցը աւելի թունաւորելու կարող եղող բնաւ մէկ պարագայէ մ'ալ ազատ չըլլալու բռնազատված էի կարծես թէ :

Իմ առաջին նայուածքս Վիսիլի հարսնիքին ամբոխին վրայ ընկաւ . հայրը առջևէն կերթար . ինք ալ տղուն ձեռքէն էր բռնած : Ենոր ետևէն կերթար Գաբրիէլ՝ իր ազգականներէն ու բարեկամներէն շրջապատված : Պայծառ երկինքը կարծես թէ կը վկայէր որ Եստուած կօրհնէր այս տօնը : Ժողովուրդը դռներն իջած փեսացուն ու հարսնցուն կը շնորհաւորէր մեծ ուրախութեամբ : Շտապաւ տեսայ այս ամենը , փասն զի աթոռի մը վրայ ընկայ ու երկու ձեռքովս աչքերս գոցեցի , այս ճնշող տեսարանը աչքէս հանելու համար . բայց իմ կամացս հակառակ՝ ամբոխը միշտ աչացս ներկայ կը մնար : Կառավարս կանչեցի , ձիերը կապեց , ու Պետրոնի ամստանոցը դա-

ցի , ուր տասնհինգ օր սաստիկ տենդ մը բըռնեց իս , որուն մէջ շարունակ ալ կը բանդագուշէի (սայրդլամագ) :

— Թշուա՞ն , ըսաւ ինձի հայրս , երբոր ալ խօսք կը հասկընայի , ի՞նչու իմ խորհրդոցս չը հետևեցար , որ քու տղայութենէդ սկսայ քեզի տալ . . . :

— Ըս'տ մտիկ ըրի քու սատանայական խըրատներդ . և անոնք մտիկ ըրած չըլլայի նէ՛ սասանկ անդարմանալի Թշուառութեան մը մէջ չէի ըյնէր :

— Բայց ես քեզի արդիլած չէի՞ մի որ սերտ կերպով մը չը՛կապվիս կնկան մը հետ :

— Ե. յո՛ . բայց դուն ինձի ալ ուսուցած էիր , որ իմ անհնարին կերպով սիրած ծաղկահասակ օրիորդէն ալ զատվիմ , որ քու հըրէշ վարդապետութիւնդ ոչինչը չերթայ : Ես սոր համար է , որ դեռ հազիւ երեսուն տարու՛ կը գտնըվիմ անանկ ապաշայի մը առջև , որուն մէջ անդարման ցաւերէ զատ ուրիշ բան մը չեմ նկատէր :

— Տէ՛ , դուն ալ , չափազանցութիւններ պէտք չէ . տենդը յաղթըվեցաւ՝ քանի մը զուարճալի որսերթութիւն ու վեցամսեայ բնակութիւն մը քու գեղեցիկ բարիտուհիներուդ հետ՝ ա

նոնք ամենը կը մոռցընեն կը լմննայ :

— Ինքզինքդ մի խաբեր հայր իմ, ցաւը քու կարծածէդ շատ աւելի ծանր է . բայց մի միայն ես կընամ չափել իմ վէրքերուս խորութիւնը, և չեմ վախնար քեզի ըսելու . աս ամենուն ծայրը անտարակոյս սոսկալի մահ մը պիտի ըլլայ . . . գուցէ ոճիր մը, որ քու ազգատոհմիդ հին կնիքը պիտի արատաւորէ :

Ե, յն ատենէն հայրս սկսաւ հասկընալ թէ ի՞նչ կընայ ընել յանկարծ կտրըված սէր մը, և Ղիւսիլի դէմ ինծի բռնել տուած վարմունքին հետեանքներէն կը վախնար : Սակայն ամենեին չը վհատեցաւ և բնաւ մէկ միջոցի մը չը խնայեց իր վարդապետութիւնները յաղթական ընել տալու համար : Բոլոր իմ բարեկամներս հրաւիրեց, ու ամիս մը լման՝ դղեակը բաքոսեան տաճար մը եղաւ : Եմեն իրիկուն Համբանիայի գինիին ազդեցութեան ներքե կը քնանայինք : Ե, յս առաջին փորձէն ետեւ, հայրս իս առաւ Բարիզ տարաւ ու հոն իս նետեց էն ազդու զուարճութեանց արբեցութեան մէջ : Բայց բնաւ մէկ բան մը չըկրցաւ իմ վրաս ազդեցութիւն մը բանեցընել : Ուստի եռամսեայ անօգուտ փորձերէ ետեւ, հայրս յանկարծ փոխեց իր բռնած ճամբան ու իս տարաւ ՚ի Մէնթ—Ե.

մանտ՝ յուսարով, որ Վիւսիլին մօտն ըլլալով, կառնաց կառնաց ալ անտարբերութեամբ պիտի տեսնէի զանի : Աւա՛ղ, այս անգամ ամեն ատենէն եւեւ խաբւած էր : Ամեն օր ցերեկները կանցընէի աչերս յառելով այն պատուհանին ապակիներուն, ուրկէ անոր բնակութեան բակը կերևար :

Ար տեսնէի, որ իր ամուսնոյն գործարանին պատուհանին քով կը նստէր կը խօսէր, կամ կը կարդար . Գաբրիէլ ալ անոր մօտը կաշխատէր երգելով : Ար տեսնէի որ իրենց զաւակը, կամ մանաւանդ իմ զաւակս, բակին մէջ կը խաղար . Բիւրամին հետ, որ աւելի երջանիկ քան իս՝ միշտ Վիւսիլին սիրականն եղած էր :

Իրիկունը, կերակուրէն ետեւ, շատ անգամ կուգար իր ամուսնոյն հետ լուսամուտին առջեւ կը նստէր ու խնդարով կը խօսէին . իրենց տրդան կը զգուէին, որ կերևար թէ շատ կը սիրէր իր խորթ հայրը :

Տեռէք ահա ինչէր կը մտածէի ամեն օր աննկարագրելի սրտի յուզմունքով : Վիւսիլի և անոր ամուսնոյն խաղաղ երջանկութեանը առջեւ իմ սիրտս մահաուրիթ անցկութեան մը ներքեւ կը բարախէր, ու աղիքներս կը կըտրուէր : Ահ, ան ատենը, որ չա՛փ աղէկ կը հասկընայի թէ եր-

Չանկութիւններ կան, որ ոսկիով առնել անկարելի է : Այն զի կամաւ կուտայի բոլոր իմ հարստութիւնս այն մարդուն տեղն անցնելու համար, որ Վիսիլին տէրն եղած էր : Ա՛հ, ասկէ ալ աւելին՝ եթէ իմ զաւկիս անոր ըրած գգուանքը ծախող մը ըլլար՝ սուղ կը գնէի ամեն մէկը :

Իայց իրենց պարկեշտ բարեկեցութիւնը կը բաւէր զիրենք երջանիկ ընելու : Իմ հարստութիւնս իրենց արհամարհա՛նք միայն կը ընար աղբէլ, և իրենց ազքատութեան մէջ զգացած ուրախութիւննին ինծի համար խայթիչ ցաւերու կը փոխվէին ու կուգային իստանջելու՝ իմ ճոխութեանս ու մոլորութեանցս նշաւակ ըլլալու տեղին վրայ :

Տարի մը ամբողջ, Տէ՛ր, իմ կեանքս մաշեցնող այս ցաւերուն մատնըված մնացի : Այս սոսկալի վիճակէն ազատելու համար հազարէն աւելի խորհուրդներ յղացայ ու մէկզէ թողի, երբոր վերջապէս հաստատ կերպով կապվեցայ մէկ որոշումի մը :

Օր մը, երբոր հայրս մեծ մեծ քայլերով կը շրջէր իմ սենեակիս մէջ, ու ինծի խրատ կուտար միշտ իր դրութեան համեմատ՝ իրեն ըսի, որ քանի մը ամիս երթալ Ռուսիոյ ար-

քունեաց մէջ ատեն անցընել կ'ուզէի :

— Շատ աղէկ գաղաբար է, ըսաւ ինծի :

— Ես ալ այնպէս կը հաւտամ, ըսի. բայց ինծի հարիւր հազար Ֆրանքի արծաթ և մէկ ճամբու կառք մը պէտք է :

— Եմենն ալ կուեննաս :

— Ընանկ է նէ, կուզեմ որ իսկոյն ըլլայ. զի կուզէի որ արդէն ճամբայ ելած ըլլայի :

— Ութ օրէն, ամեն բան պատրաստ է :

Դիտած ըլլալով, որ Միւսիլ շատ անգամ իր տղուն հետ մինակ՝ քաղքին մօտ իրեն ունեցած այգին կերթար՝ միտքս դրած էի, որ զանի այն տեղէն յափշտակել կընամ. և հարիւր հազար Ֆրանքն ու կառքը ձեռք անցընելուս պէս խորհուրդս կատարեցի :

Բայրը ցերեկը անցուցեր էի ճամբու պատրաստութիւններս ընելու զգաղելով, և այն վայրկեանին, որ Միւսիլ սովորաբար իր պըտոյտէն ետ կը դառնար՝ ծանր ծանր քաղքէն դուրս ելայ : Ճամբուն այն կողմը հասնելով, ուր զանի դիմաւորէի պիտի՝ կառավարս ձիերը կայնեցուց. և իմ հրամանացս հետևելով, ըսկըսաւ աստիճանները շտկել ձեացընել : Կարծածէս աւելի երկար ատեն սպասեցինք. բայց վերջապէս տեսնովեցաւ, անկասկած առաջ

եկաւ . և երբ իմ կառուցիւ ժօտեցաւ , երկու մարդ , որոնց ստակ կերուցած էի , ճամբուն փոսէն ելան զանի տղուն հետ բռնեցին ու ճարպիկութեամբ մը կառքին մէջ դրին : Բոլոր ուժովը պօռաց , բայց իմ կառքս , որ Ռուսիոյ համար շինված էր՝ բուրդով խցված ու խիստ աղէկ , գոցուած էր , ձիերն ալ շատ արագ վազելով չըկրցաւ իր ճայնը լսել տալ . շուտ մը առաջին օթեւանները անցանք : Ետքը , ալ զիս ապահով կարծելով , կամացընեւ տուի ընթացքը , Լիւսիլն խօսք հասկըցընելու համար , որ չէր դադրէր ողբալէն . ու ամենեւին բան մը ուտել չէր ուզէր :

— Իմ սիրելի բարեկամուհիս , ըսի իրեն . կաղաչեմ , հանդարտէ . դուն կը տեսնես , որ ես զքեզ կնիկներուն էն երջանիկն ընելու համար յափշտակեցի . ալ չէի կրնար քենէ զատված ապրիլ . շատ սէտք եղաւ , որ այս կէտը դամ : Էլիմայ , դուն ինչ բանի որ փափաքիս՝ ես անոնց ամենն ալ պիտի տամ քեզի առաւելլապէս : Մեր տղուն հետ երջանիկ կըրնանք ըլլալ : Վու ամուսինիդ ալ իր ապրուստը հողացեր եմ . այն կերպով տնօրինեցի , որ բաւական եկամուտ մը պիտի ունենայ : Կաղաչեմ զքեզ , տուր ինձի քու սէրդ , զանի կը խնդ

րեմբ քենէ իբրև շնորհք : Դուն աղէկ գիտես որ
ես հողուով մարմնով կը սիրում քեզ , այո , քու
սիրուդ խենդն եղած եմ : Ահ կաղաչեմ զքեզ ,
մուցիր իմ յանցանքներս ու տուր ինձի դոնէ
քու յարգանքդ :

— Դուք հրէշ մըն էք , պօռայ . ես ձեզ
յաւիտեան պիտի ատեմ : Պարապ աեղը նորէն
սկսայ իրեն հետ խօսելու . ալ ինձի ամենեւին
պատասխան չըտուաւ : Սակայն , երբոր 'ի Պու-
տո հասանք , հանդարտիլ մը ցուցուց : Իմ բա-
րեկամներէս հարուստ միայնակեացի մը տունը
իջայ , որ միս մինակ կապրէր պանդոկի մը
մէջ և որուն առաջուց իմայ տաւեր էի :

Եւսիլ բաւական վայելուչ կերպով տեղա-
ւորվեցաւ իրեն համար պատրաստըված յար-
կին մէջ : Իրեն տարուած խնամքներուն մէկն
ալ չըմբռնեց , և ուրսխութիւն անգամ ցոյց
տուաւ : Ահ , ան ատեն , Լստուած իմ . վայր-
կեան մը մարդոց էն երջանիկն եղայ . վիշտե-
րով թաւամած իմ խեղճ սիրտս կուրծքիս մէջ
նորէն կենդանացաւ : Իրիկուն մը , որ բարե-
կամիս հետ իր պարտեզին նշգարեաց (կիւրկէն
աղաճը) հովանոցին ներքև կը պտըտէի , իրեն
ըսի . ի՞նչ կըսես , Եւսիլ հիմայ իր սէրը ին-
ձի տալու տրամագրութիւն չը ցուցըներ կոր :

— Կարծեմ, պատասխանեց :

— Ե՛հ, յարեցի, իր բարի զգացմանց վըրայ վտտահ եղածիս պէս՝ զանի Սպանիա կամ Խտալիա պիտի տանիմ : Ե՛ն զուարճալի քաղբի մը մէջ տուն մը պիտի գնեմ, ու հոն ինքզինքըս բողբոլվին իմ երջանկութեանս պիտի տամ : Ելևսիլ ալ էն բարձր ընկերութեան Թագուհին պիտի ըլլայ :

Քաշած վիշտերը քիչ մը գեղնեցուցեր են զանի . բայց երբ որ երջանիկ ըլլայ՝ իր Թարմութիւնը նորէն կուգայ . ու ան ատենը չը՛գեղեցկանար մի . ուրիշ ամեն կնիկներէն գեղեցիկ կըլլայ :

— Հաւատի՛ . պատասխանեց բարեկամս :

Տակաւին խօսիլ կուզէի, երբ յանկարծ լըսեցի, որ իմ շունս տանը ներսիդին մահ մը կուռնար :

Թ

Սարսուռ մը եկաւ վրաս, ու աղետալի կանխազգումէ մը մղված՝ Ելևսիլն սենեակը վաղեցի... : Եւա՛ղ, աւա՛ղ... տեսայ զանի իր տղուն հետ, երկուքն ալ գետնին վրայ արեան ձահիճի մը մէջ անշարժ տարածված : Ելև

րամ, խեղճ շունը, անոնց վերքերը կը լլեր
ու հաչելով, կարծես թէ, անոնց օգնութիւն կը
կանչէր :

Անոնց մարմնոյն վրայ ընկայ . տղաս մա-
հացու կերպով վիրաւորված չէր . անտարա-
կոյս Վիլսիլ զանի բաւական գէշ զարնելու քա-
ջութիւն չէր ունեցած : Բայց իր կուրծքին
վրայ լայն վերք մը բանալու կարող եղեր էր :
Պակայն իր վերջին խօսքը լսելու պէտք եղա-
ծին չափ շուտ հասած էի քովը, և այս խօս-
քը աւա՛ղ, անէծք մը եղաւ ինծի :

Յաւեր կան, այնչափ խոր, որոնք մարդ մը
հասկընալու համար, պէտք է որ ինք զգացած
ըլլայ : Մարդկային լեզուն անոնք բացատրելու
բառեր չունի ամենեւին . ուստի չք պիտի աշ-
խատիմ ձեզի նկարագրելու ինչոր զգացի, երբ
դ՛իւսիլ տեսայ արիւնաշաղախ և յաւիտենա-
բան սառած իմ բազուկներուս մէջ . . . վայը
կեան մը խելքս թռուցի . հայհոյութիւն կ'ընե-
ի Շատուծոյ, որ կարողութիւն չէր տար ինծի
այս կինը նորէն կենդանացընելու, որուն կեան-
քը այնչափ թանկազին էր ինծի : Ստքը ինք-
զինքս սպաննել ուզեցի : Բայց բարեկամս
բռնեց այն թևս, որ իմ կուրծքս կը խօթէր
իմ սիրուհւոյ սիրտը պատուտող երկաթը :

Սակայն շուտ մը խերքս գլուխս գալով ,
հասկըցայ որ մէկ վայրկեանի մէջ հասած մահ
մը բաւական չէր իմ գործած անիրաւութիւն-
ներս բաւելու . ահա ան ատենն էր , որ մտա-
ծեցի հոս գալ ու այս առանձնութեան մէջ
ծանր ծանր սնունդ : Գոնէ Աստուած ի՛նքը
կը դատէ զիս , և երբոր ալ բաւական նեղու-
թիւն կրած ըլլամ՝ կառնէ կը վերցնէ իս իմ
տառապանաց մէջէն : Ամենեւին չեմ ուզեր իմ
տառապանքներս ինէ հեռացընել . ընդհակա-
ռակն , շունս ալ հետս հոս բերի , որ ան-
ցեալը յիշեցնէ ինձի . և օր չըլլար , որ անոր
առջևը խոնարհելով , ՚ի՛ դատաստան չըկան-
չեմ իմ յիշատակութիւններս , որոնք կուգան
ու անզդներու պէս իմ սիրտս կը խաճկուտեն :
Որչափ իս խաճնեն , այնչափ աւելի գոհունա-
կութիւն կը զգամ վասն զի կուզեմ , որ զ՛իւ-
սիլ երկինքի մէջ նորէն դտած ատենս գոհ
ըլլայ իմ տառապանքներէս ու հոգին աւան-
դած ատեն ինէ զլացած ներողութիւնը պար-
զէի ինձի :

Ահա իմ պատմութիւնս , Տէ՛ր , կը տեսնէք ,
որ իմ ցաւերս ձեր կարեկցութեանն անարժան
են :

— Հաճեցէք հակառակն հուտալու , Տէ՛ր ,

աբոտոսխանեցի՝ մեր դարին մէջ քիչ մարդիկ
կը գտնուվին, որ քեզի չափ դիւրազգաց ըլ-
լան. ձեր Ղիւսիւի դէմ գործած յանցանքնուդ
վրայ սիրտերնին չը խռովելէն զատ, մեծ մա-
սըն ալ կը խնդան իսկ :

Չեր կրած տառապանքը կը ցուցնեն որ
դուք լաւագոյն զգայմունքով լըցուն հոգի մ'ու-
նիք : Լսկէ զատ, յանցաւորը միայն բու հայ-
րըդ է. վասն զի դուք անոր ազգեցութեամբը
գործ չըտեսած ատեննիդ միշտ ազնիւ ու բա-
րի եղած էք. ուստի կը յուսամ որ տեղի պիտի
տաք դուք աղաչանքիս ու պիտի դառնաք 'ի
Ֆրանսա . ձեր եւամեայ աքսորը բաւական է
կրօնական կերպով անգամ քաւելու ձեր մեղ-
քերը :

— Իմ յանցանքներս դուք իմ հօրս կուտաք.
բայց Տէ՛ր, իմ հայրս ձեր հայրն է. բոլոր
հարուստ երիտասարդներուն հայրն է. ինծի
տուած դաստիարակութիւնը, ընդհանրապէս
Ֆրանսայի մէջ ամեն տղոց առած դաստիա-
րակութիւնն է : Ինչ որ իմ հայրս կը գրու-
ցէր ինծի համարձակ ու ծովականի մը կծու ու
յստակ լեզուովը՝ նոյնը մեղմով կ'իմացրնեն
իրենց որդւոց շայերուն մեծագոյն մասը, և
եթէ զանոնք այս հրապոյրքներով չըզբզուեն

նէ ալ թող կուտան որ աղատարար ընեն ու
 զածնին : Եսի մեր բնկերական խոցերէն մէկն
 է, որ բազմամեայ ախտի մը վիճակին մէջ
 մտած է : Ժողովրդեան աղջիկները կը խայ-
 տաւակեն, և երբոր այս կերպով զանոնք կ'ա-
 ռակեն՝ խեղճութեան ու մոռացութեան մէջ
 կը նետեն զանոնք, ինչպէս որ ցեխին մէջ կը
 նետեն այն թուամած ծաղիկը, որ քանի մը
 վայրկեան իրենց զգեստին օղակին մէջ կրեցին :
 Եյսպէս ուրեմն, իմ պատմութիւնս հարուստ
 երխտասարդաց մեծազոյն մասին պատմութիւ-
 նքն է, և եթէ ես, իմ վարմունքովս, ձեզի
 բարկութիւն մը ներշնչեցի՝ պէտք է որ զանի
 հաճէք բոլոր այն անաւակներուն վրայ որ
 բնկերութեան մէջ գտնուած էն սրբազան է-
 րը պղծելը կատակ մը կը համարին : Եմբաս-
 տանեցէք զանոնք Եստուծոյ և մարդկան առ-
 ջև վասն զի անոնք մարդկային օրէնքները
 միայնգամայն և կրօնքին զանազան սկզբունք
 ները ոտքի տակ կ'առնեն :

Բայց սակայն, եթէ ինքզինքնին չուղղեն՝
 կանուխ կամ ուշ, իրենց մոլութեանց մէջ
 իսկ պիտի գտնեն պատիժ մը, վասն զի այս
 ախտը, որ վերին աստիճանէն կուգայ, կ'սկըսի
 ստորին կարգերուն մէջ իջնել և եթէ օր մը

ապականեալ ժողովուրդը չճանչելիք ընէ բոլոր բարոյական օրէնքները , վայ , հազար վայ անոնց , որ իրենց զէշ օրինակովը , ընկերական այս ամօթալի անկումը բերած պիտի ըլլան :

Եփսոս . Ֆրանսան արդէն շատ առաջ բաւած է այս օրհասական զառ 'ի վայրին վրայ : Մեր կառավարները զանի ազատել կը ջանան կոր քաղաքական և դրամական միաբանութեամբ բայց չըպիտի յաջողին վասն զի բարոյականէն սկսել պէտք է : Ընբարոյականութիւնը կըրնայ ողբատոցընել ազգը . բայց հարստացընելու ալ կարող ըլլար նէ՝ միշտ զանի տկարացընելու ու թշուառացընելու կը ծառայէ : Կապերտներով ծածկըված առողջ մարմին մը աւելի աղէկ է քան թէ խոցերով ծածկըված դիակ մը մետաքս ու ոսկի հագած : Եսկէ զատ երբոր ժողովուրդի մը բարբը ազականութեան աստիճանի մը մէջ է՝ ալ կարելի չէ զանի կառավարել : Եպականութիւնը զմարդիկ հաճոյից ցանկացող ընելով , ամենքն ալ միմիայն իշխանութեան հասնելու սնափառութիւնը կ'ունենան ու չքեղութիւն կ'երագեն . և որովհետեւ մեծագոյն մասը չեն կրնար հարուստ և իշխան ըլլալ՝ մեծագոյն մասը երբէք գոհ չըլլար :

չո՞ն է մեր ամեն յեղափոխութեանց պատճառը : Բանի որ ընկերութիւնը իր ճշմարիտ խարխսիւր , բարոյականի վրայ չհանգչիր՝ միշտ աղէտալի ներքին ճգնաժամներու մէջ պիտի տատանինք : Ըսով աղքատներն հարուստներուն դէմ , կառավարվածները կառավարողներուն դէմ մշտնջենաւոր պատերազմի մը մէջ պիտի ըլլան՝ մինչև որ Ֆրանսա բուն իր արիւնին մէջ սուղանի ու օտարներուն ճարակն ըլլայ : Ըն ատենը անխելք ժողովուրդը պատուհաս մը պիտի գտնէ . ինքզինքը պիտի անիծէ իր կիրքերուն հնազանդած և իր մարմնոյն անկարգ ախորժակները հողացնել ուղած ըլլալուն համար . վասն զի իր ցանկացած շրքերութեան փոխանակ՝ պիտի առնէ կապերտներն ու գերութիւնը : Պիտի հասկընայ բայց աւա՞ղ շատ ուշ պիտի հասկընայ , որ կընայ ճշմարիտ երջանկութիւնը վայելել իր ազատութեան , իր ընտանիքին , իր աշխատութեան և նոյն իսկ իր աղքատութեան հետ : Բարոյականի տէր մարդը կատարեալ իրաւախոհ է . և իրաւախոհ մը միշտ երջանիկ է , էն չարագոյն վիճակին մէջ ալ :

Բայց թող չըմուռնան այս բանը , այս ազգային փոթորիկին մէջ հարուստներն են ամե-

նէն առաջ զսրնըվելիքները . ուստի իրենց
համար և ընդհանուր շահուն համար, իրենց
օրինակովը ժողովուրդը շինելու ու սրբացնելու
էին : Իրենց ու Քրանսայի վիճակը իրենց վար-
մունքէն կախում ունի :

Իմ սիրելի հայրենեացս սիրուն, ջեբը-
եռանդով կը ժափաքիմ, որ Մատուած զանոնք
լուսաւորէ ու բուսցընէ անոնց սրտին մէջ բա-
րոյականի այս սկզբունքները, որպէս զի զա-
նոնք ժողովրդեան անցընեն, զանի աւելի առա-
քինի, աւելի խոհեմ ու աւելի երջանիկ ընե-
լու համար :

.

Գուք կ'ըսէք թէ կրնամ 'ի Քրանսա դառ-
նալ, և թէ ես իրեք տարուան աքսորով իմ
մեղացս թողութիւնն առած եմ կրօնական կեր-
պով խկ : Ի՞նչ, պարօ՛ն, չէ՞ մի որ Ղիւսիլի
մահուան հեղինակը ես եմ, և ինքզինքս կշտամ-
բելու միայն այս մարդասպանութիւնս չէ . անկէ
զատ երեք ալ կայ : Ուրեմն 'տակաւին զրու-
ցած չեմ ձեզի թէ Գաբրիէլ իր կնօջը մահը
լսելով ինքզինքը սպաններ էր . Ղիւսիլի հայ-
րըն ու հօրեղբայրը յուսահատութեամբ մեռեր
էին : Այո՛, ամեն կերպով զանոնք չարչարե-
լէն եաւ, այս չորս բարի արարածները իմ

կրիցս զոհեցի, մէկ պարզ հաճոյք մը հոգա-
ցրնելու համար : Ո՛հ, ան ամեն հարուստները,
որ ինծի պէս իրենց հարստութիւնը կը վատ-
նեն աղքատներուն պատիւը իրենց խաղալիք
ընելու՝ յաւիտեան անիծեալ ըլլան մարդոցմէ
և իրենց մեռնելուն ետեւ ալ յաւիտենական
դատապարտութեան մը մատնելին : Եւմեն պա-
տիժներու ալ արժանի են :

Եյս խօսքերէն ետեւ, որոնք կոմսը ամեն
մեծ բորբոքումով մը արտասանեց՝ քանի մը
խօսք միայն կրցայ թոթովել անոր ցաւակից
ըլլալու . և անոր բովէն հեռանալէս ետեւ, զգա-
ցի որ իր պատմութիւնը իմ սրտիս մէջ անանկ
մէկ քանի բարի զգացմունք դրած էր, որ դեռ
չէի ճանչէր :

Քանի մը օր ետքը, ՚ի Ֆրանսա դառնա-
լու վրայ ըլլալով, դացի իմ վերջին այցելու-
թիւնս ընելու այս հարուստ առանձնակեացին :
Հատ մեծ զժուարութեամբ զատվեցաւ ինէ և
վերջապէս ինծի նամակ մը յանձնելով իր Պօր-
տոյի բարեկամին տալու համար՝ օրուն քով
մեռած էր Նիւսիլ, երթաս բարով ըսաւ ին-
ծի :

Հետեւեալ օրը, դեռ աւտու չեղած, եր-
բոր նաւաստիններն կը պատրաստըվէին երկաթ

առնելու սենեկայէն իջնելու համար՝ կոմսին սեամորթը զետեղերքն եկաւ և ըսաւ թէ իր տէրը զիս տեսնել կը խնդրէ . — փուլթացի խորճիթն երթալու . մեծ զարմանքով տեսայ որ Պեօւրօնի կոմսը հոգին աւանդելու վրայ էր : Ի սկզբան կարծեցի թէ ինքզինքը զարկեր էր . բայց շուտ մը հասկըցայ , որ իր պատմութիւնը ինծի ըրած ատեն զգացած սաստիկ յուզմունքներէն կուրծքին մէջի շնչափողներուն մէկը փրթեր էր և արդէն արիւնով կը լեցվէրկոր :

— Իմ վերջին կամքս իմ բարեկամիս համար ձեզի յանձնած նամակիս մէջ գրված է . չմոռնաք զանի իրեն ձեռքը հասցընելու : Հետերնիդ տարէք իմ սեամորթս . ինծի աղէկ ծառայութիւն ըրաւ , տղաս թող աղէկ հոգ տանի անոր :

Թաղեցէք իս իմ հիւղս պատող հնդիկ կեռասենիներուն ներքեւ :

Չեզի կը թողում Բիւրամը , Վիւսիլին բարեկամն . և իմ տարագրութեան հաւատարիմ ընկերս : Եղօթք ըրէք որ Եստուած ներէ ինծի . . . :

Եսոնք եղան Պեօւրօնի կոմսին խօսքերը , որ կարող եղաւ արտասանելու . ու հոգին փըջեց իմ բազկացս մէջ . ամենայն ակնածու

Թեամբ մտիկ ըրի իր վերջին կամքը :

Պեօւրոնի կոմսին իր բարեկամին ուղղըված նամակը հետևեալ յօղուածները կը պարունակէր կտակի ձևով :

Յօդ . Ը . Կը Թողում բոլոր իմ ստացուածքս ժառանգած և ժառանգելիք, Վիսիլէն ունեցած զաւկիս, որ Թօլատի պարօն պատուանունն աւնելու է :

Յօդ . Բ . Երդիւր տը Վօիս իմ բարեկամս, որուն քով Թողած եմ որդիս՝ անոր խնամակալ պիտի ըլլայ . զանի պիտի մեծցընէ իր աստիճանին պատշաճ կերպով և զանի իմ հարստութեանցս ժառանգորդ պիտի ընէ :

Յօդ . Գ . Կը բաղձամ որ իմ որդիս իմ պատմութիւնս երբէք չըզիտնայ . և իմ խօսքս ըլլալը լսել չըտալու համար՝ իմ Վօիս բարեկամս Պերրիի մէջ ունեցած կալուածներս պիտի ծախէ ու Բէրիկօյի մէջ գետիններ և ամրոց մը պիտի գնէ, որ իմ տղուս պիտի տայ իբրև իր ընտանիքին բուն ստացուածքները :

Ըս ամենը կատարվեցաւ Պեօւրոնի կոմսին կամացն համեմատ :

Die erste Hälfte der in dieser Hinsicht
 enthaltenen Angaben ist nachstehend
 nachstehend zusammengestellt, wobei die
 die Hälfte der in dieser Hinsicht

Die zweite Hälfte der in dieser Hinsicht
 enthaltenen Angaben ist nachstehend
 nachstehend zusammengestellt, wobei die
 die Hälfte der in dieser Hinsicht

Die dritte Hälfte der in dieser Hinsicht
 enthaltenen Angaben ist nachstehend
 nachstehend zusammengestellt, wobei die
 die Hälfte der in dieser Hinsicht


Die vierte Hälfte der in dieser Hinsicht
 enthaltenen Angaben ist nachstehend
 nachstehend zusammengestellt, wobei die
 die Hälfte der in dieser Hinsicht


Die fünfte Hälfte der in dieser Hinsicht
 enthaltenen Angaben ist nachstehend
 nachstehend zusammengestellt, wobei die
 die Hälfte der in dieser Hinsicht

Die sechste Hälfte der in dieser Hinsicht
 enthaltenen Angaben ist nachstehend
 nachstehend zusammengestellt, wobei die
 die Hälfte der in dieser Hinsicht

The page features a decorative border with ornate, symmetrical scrollwork and floral motifs at the corners and midpoints. In the center, a circular frame with a repeating floral pattern encloses the year.

1859





2728

2729

2730

2731

2732

2013

